Azg
Հայաստանի
27 ՅՈՒՆՈՒԱՐ 1998 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 11 (1514)

Մոսկվան ուզում է փրկել Բաղդադը ԱՄՆ-ի հարվածից

26 ՀՈՒՆՎԱՐ, BBC, RFI Իրաքի ղեկավարությունը հայտարարեց, որ տեղի չի տա ամերիկյան սպառնալիքներին եւ դիմեց մի շարք երկրների՝ ՄԱԿ-ի ԱԽ-ում իրեն աջակցություն ցուցաբերելու խնդրանքով: Իրաքի մամուլը հայտնում է, որ Բաղդադն այժմ մոբիլիզացնում է միլիոնավոր ֆաղաքացիների: Բացի այդ նշվում է, որ ամերիկյան նախագահը գտնվում է ֆաղաքական եւ բարոյական սնանկացման վիճակում, այնպես որ նա այժմ չի կարող հույս ունենալ, թե միջազգային աջակցություն կստանա: Հայտնի է, որ ԱՄՆ-ը չի բացառում միակողմանի կերպով ուժի կիրառումը:

Ռուսաստանի ԱԳՆ-ի ներկայացուցիչը շեշտել է, որ Մոսկվան չի փոխել իր դիրքորոշումը, այսինքն դեմ է զինված ներխուժմանը եւ կողմ է Սադդամ Հուսեյնի վարչակարգի հետ բանակցություններին: Շաբաթ օրը Սպիտակ տունը նախազգուշացրեց, որ ԱՄՆ-ը կգործի ինքնուրույն, առանց ՄԱԿ-ի ԱԽ-ի հետ գործողությունները համաձայնեցնելու, եթե Սադդամ Հուսեյնը շարունակի արհամարհել ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձեւերը: «Նյու Յորֆ թայմս» թերթում հրապարակված է ամերիկյան պատասխանատու անձանց կարծիքը, թե անհրաժեշտ է հրթիռակոծել այն տեղերը, որտեղ Իրաքը պահում է իր քիմիական եւ կենսաբանական զենքերը: Որպեսզի դա կանխվի, Ռուսաստանի նախագահ Ելցինը Բաղդադ է ուղարկել իր հատուկ բանագնացին՝ Ռուսաստանի փոխարտգործնախարար Վիկտոր Պոսուալյուկին: Ռուսաստանն այդ որոշումը կայացրել է առանց ԱՄՆի հետ նախնական համաձայնության:

ԱՐՁԱԳԱՆՔ

Արծրուն Մարգարյան. Ոչ ոք իրավունք չունի իմ անունը շահարկելու

Մահափորձի մասին նախազգուշացրել էին նաեւ Անդրանիկ Քոչարյանին

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- «Ես չեմ ուզում ու թույլ չեմ տալիս ոչ մեկին՝ ոչ մի ֆաղաքական կուսակցության, ոչ մի ֆաղաքական ուղղության, այս դեպքը ֆաղաքական շահարկումների առիթ սարքելու... Քննություն է գնում, քննությունը կպարզի, թե ինչ է կատարվել, ինչ է տեղի ունեցել: Եվ ոչ ոք իրավունք չունի իմ անունից կամ որեւէ մեկի անունից ֆաղաքական շահարկումների առիթ ստեղծելու այս դեպքի կապակցությամբ»: Հունվարի 24-ին այսպիսի հայտարարություն արեց ՀՀ ՆԳ եւ ԱԱ փոխնախարար, ներքին զորքերի հրամանատար, գեներալ-մայոր Արծրուն Մարգարյանը իր դեմ կատարած մահափորձի առնչությամբ:

Նախազգուշացվա՞ծ է եղել նա իր դեմ նախապատրաստվող մահափորձի վերաբերյալ՝ հարցին գեներալ Մարգարյանը պատասխանեց, որ «այդ մասին հետո կխոսի»:

Մինչ այդ հիվանդին այցելության եկած ԱԺ պատգամավոր, ՀՀՇ անդամ Անդրանիկ Քոչարյանը պատասխանելով «Նոյյան տապանի» թղթակցի հարցին, հաստատեց այն փաստը, որ իրեն նույնպես նախազգուշացրել են իր դեմ նախապատրաստվող մահափորձի վերաբերյալ: Սակայն պրն. Քոչարյանը հրաժարվեց հայտնել, թե ով եւ երբ է արել այդ նախազգուշացումը:

Հիշեցնենք, որ հունվարի 23-ին հրավիրված մամուլի ասուլիսում ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հայտարարելով, որ վերջերս կատարված բոլոր մահափորձերը «սարքված էին», նշել է, որ Անդրանիկ Քոչարյանը եւ Արծրուն Մարգարյանը նախազգուշացված էին իրենց դեմ նախապատրաստվող ահաբեկչության վերաբերյալ:

Հիվանդանոցի տնօրեն Արտավազդ Սահակյանը տեղեկացրեց, որ Արծրուն Մարգարյանի վիճակը համապատասխանում է հունվարի 21-ին կատարած վիրահատության ծանրությանը, սակայն վիճակը կայուն է եւ նրա կյանքին վտանգ չի սպառնում:

Հունվարի 24-ին Ա. Մարգարյանին վերակենդանացման բաժնից տեղափոխեցին հիվանդասենյակ, որը շուրջօրյա հսկում է զինված պահակախումբը:

ԼՂՀ

Ստեփանակերտը դարձյալ «խառնվում է» Հայաստանի ներքին ֆաղաքականությանը

Հունվարի 24-ին ԼՂՀ կառավարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ ասվում է. «ԼՂՀ կառավարությունը դատապարտում է վերջին օրերին ՀՀ-ում կատարված հանցագործությունները եւ պետության սոցիալ-տնտեսական իրավիճակը աղակայունացնելու նպատակով դրանց օգտագործման փորձերը: Տագնապ եւ մտահոգություն են հարուցում իշխող կուսակցության որոշ անպատասխանատու ֆաղաքագետների հայտարարությունները, որոնք ձգտում են տեղ գտած փաստերը ցանկացած գնով կապել դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ԼՂՀ եւ ՀՀ ղեկավարությունների միջեւ առկա տարաձայնությունների հետ:

Այդ սադրիչ հայտարարությունները պառակտում են մտցնում հայ հասարակության մեջ, խախտում ազգի միասնությունը, հայկական երկու պետությունների, ֆաղաքական-իրավական եւ բարոյական հիմքերը:

ԼՂՀ իշխանությունները, դատապարտելով ինչպես հանցավոր գործողությունները, այնպես էլ ֆաղաքական շահարկումները, այսօր առկա ճակատագրական իրավիճակի համար պատասխանատու պետական գործիչներին կոչ են անում առաջնորդվել ոչ թե պատեհապաշտությամբ, այլ համազգային շահերով, ինչը թույլ կտա կանխել հետագա աղակայունացումը»:

ՀՀ-ում ֆաղաքական իրավիճակի սրվելու կապակցությամբ մտահոգություն հայտնվեց նաեւ հունվարի 26-ին, ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի նախագահությամբ անցկացված Արցախի ազգային-ազատագրական պայքարի 10-ամյակի հանդիսավոր տոնակատարության միջոցառումների կազմակերպման կառավարական հանձնաժողովի հերթական նիստում: Ամփոփվեցին հանձնաժողովի աշխատանքի նախնական արդյունքները, քննարկվեցին հոբելյանի տոնակատարության համալիր ծրագրի շրջանակներում առանձին նախարարությունների եւ գերատեսչությունների առաջարկությունները:

ՎԱՀԵՔ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀՀ արտգործնախարարը մեկնեց Լեհաստան

ԵՐԵՎԱՆ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- Հունվարի 26-ին արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնեց Լեհաստանի Հանրապետություն:

ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների դեպարտամենտի հաղորդագրության համաձայն, Վարշավայում նախատեսված են նախարար Ալեքսանդր Արզումանյանի հանդիպումները Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնեւսկիի, վարչապետ Յերժի Բուզեկի, Սեյմի նախագահ Մաչեյ Պլազինսկիի, Սենատի նախագահ Ալիցիա Գոժեսկովյակի, եվրոպական ինտեգրացման նախարար Ռիչարդ Չարնեցկիի, ինչպես նաեւ արտգործնախարար Բրոնիսլավ Գերեմեկի հետ:

Արտաքին ֆաղաքական գերատեսչությունների ղեկավարների առանձնազրույցին եւ երկկողմ բանակցություններին կհաջորդի երկու պետությունների հարաբերությունները կարգավորող փաստաթղթերի ստորագրման արարողություն: Ստորագրմանը նախապատրաստված փաստաթղթերի թվում են. «Արձանագրություն Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լեհաստանի Հանրապետության կառավարության միջեւ մշակութային եւ գիտական համագործակցության մասին» եւ «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լեհաստանի Հանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցության վերաբերյալ»:

Փաստաթղթերի ստորագրման արարողությունից հետո նախատեսված է երկու պետությունների արտգործնախարարների համատեղ մամուլի ասուլիս:

Այցի շրջանակներում նախարար Արզումանյանն իր նստավայրում կընդունի Լեհաստանի հայ համայնքի ներկայացուցիչներին:

Բիլ Քլինթոն. Մերս գաղտնի թող մնա... մինչեւ երեքշաբթի

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- Միացյալ Նահանգներում նախագահ Բիլ Քլինթոնի անձի շուրջ առաջացած իրարանցմանը փոխարինելու են գալիս հավասարակշռված դատողությունները: Քլինթոնի կողմնակիցների շարքերում վերջերս առաջ եկած ալիքումը կարծես վերանում է:

«Հրաժարական չի լինելու, լինելու է պատերազմ: Մենք՝ նախագահի ընկերներս, վրդովված ենք եւ մտադիր ենք պաշտպանել մեր նախագահին», ասել է Քլինթոնի խորհրդական Ջեյմս Քարվելը:

ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնի մեկ այլ խորհրդական եւ ընկեր Ջեսի Ջեկսոնը կոչ է արել ամերիկյան ժողովրդին խուճապի մեջ չընկնել եւ ժամանակից շուտ եզրակացություններ չանել:

Իսկ Քլինթոնի խորհրդական Ռեմ Էմանուիլն ամեն ինչում մեղադրում է թղթակիցներին, «սա նրանց եփած ճաշն է: Իսկ մարդկանց մեծ մասը,



ցավոք, ավելի հավատում է շուկնեերին ու բամբասանքին, քան աղացուցված փաստերին»:

«Վաշինգտոն փոստի» հունվարի 25-ի համարում հրապարակվել է Քլինթոնի երկու ընկերների վկայությունը, ըստ որի նախագահն, իբր, իրենց ասել է, թե ընկերություն է անում մի կնոջ հետ, եւ թե իրենք փոխադարձաբար համակրում են իրար, ոչ ավելին: Հնարավոր է, որ դա Մոնիկա Լեւինսկին է, գրել է թերթը:

Քլինթոնն ինքը լռում է եւ մինչեւ երեքշաբթի օրը, երբ պետք է երկրում տիրող վիճակի վերաբերյալ ելույթ ունենա Կոնգրեսում, մտադիր չէ որեւէ հայտարարություն անել:

Հաստատելու համար, որ ամեն ինչ նորմալ է Սպիտակ տանը, Բիլ եւ Հիլարի Քլինթոնները կիրակի առավոտյան եղան եկեղեցում, իսկ երեկոն նվիրեցին Սպիտակ տանը ֆուտբոլային խաղ դիտելուն:

«Երկաթե վարագույրը» խանդողները կկարողանա՞ն պատռել «թավշյա վարագույրը»

26 ՀՈՒՆՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»- Եվրամիության արտգործնախարարների խորհուրդը Բրյուսելում հավանություն տվեց եվրամիության ընդլայնմանն ու եվրոպական միացյալ դրամական համակարգի ստեղծմանն ուղղված միջոցառումների ծրագրին, որն առաջարկել էր Մեծ Բրիտանիան որպես եվրամիության հերթական նախագահող: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ռոբին Քուքն ամփոփելով քննարկումներն ասել է. «Մենք ֆանդեցինք ռազմաքաղաքական հակամարտության «երկաթե վարագույրը» եւ հիմա չպետք է թույլ տանք, որ գոյանա եվրոպական հարուստ եւ աղքատ երկրների բաժանող «թավշյա վարագույր»: Եվրամիության ընդլայնման գործընթացը պաշտոնապես սկսվելու է մարտի 12-ին, Լոնդոնում հրավիրված եվրոպական համաժողովով: Եվրամիության անդամության 11 թեկնածու երկրներից բացի համաժողովին հրավիրվել է նաեւ Թուրքիան: Սակայն Անկարան չի ընդունել այդ հրավերը:

Ջեմը՝ Գերմանիայում

26 ՀՈՒՆՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»- Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմը ժամանեց Գերմանիա: Նա հանդիպելու է Գերմանիայի արտգործնախարար Կլաուս Քինկելի հետ: Բոննում Թուրքիայի ԱԳՆ ղեկավարը խորհրդակցություն է անցկացնելու եվրամիության անդամ-երկրներում հավատարմագրված թուրքական գլխավոր հյուպատոսների հետ: Այս խորհրդակցությունն ամենայն հավանականությամբ նվիրված կլինի Թուրքիայից դեպի եվրամիության երկրներ ընթացող զանգվածային գաղթին: Թուրք նախարարը Գերմանիայում հանդիպումներ կունենա նաեւ թուրքական ստվարաթիվ համայնքի ներկայացուցիչների հետ: Հիշեցնենք, որ Թուրքիայի եւ Գերմանիայի փոխհարաբերությունները եվրամիության վերջին գագաթաժողովից հետո բավականին լարվել են: Թուրքիայի վարչապետ Յըլմազը հայտարարել էր, թե Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլը ցանկանում է տեսնել եվրամիությունն իբրեւ քրիստոնեական ակումբ:

ԹՈՒՐՔԻԱ

Մաֆիա-կառավարություն կապը գաղտնի կմնա

Օրերս Թուրքիայի վարչապետ Մեսութ Յըլմազը հեռուստատեսային հարցազրույցում հայտարարել է, թե 1996 թ. նոյեմբերին Սուսուրլուքում տեղի ունեցած ավտովթարի հետեւանքով կառավարության եւ հանցագործ կազմակերպությունների համագործակցության բացահայտված փաստերը պետք է գաղտնի մնան ազգային անվտանգության նկատառումներով:

Ինչպես հայտնի է, կառավարության եւ թուրքական մաֆիայի ղեկավար Աբդուլա Չաթլիի համագործակցությունը վերաբերել է այլախոհների եւ հայկական շահերի դեմ գործված արարքներին:

Վարչապետական քննչական խորհրդի պատրաստած վերջին տեղեկագրում նշվել են 11 փաստեր, որոնք ապացուցում են նշյալ համագործակցությունը: Մասնավորապես հայտնվում է Թուրքիայի կառավարության կողմից սիրիական ծառայություններին 10 մլն դոլար տրամադրելու հանգամանքը: ՔԲԿ ղեկավար Աբդուլա Օջալանին սպանելու նպատակով: Հակահայկական գործողությունների վերաբերյալ թուրքական «Հյուրրիյեթ» թերթում հունվարի 22-ին գրվել է. «Գրող էրջան Չիթլիողլուն անցյալ տարի հրատարակեց «Պահեստի գործակատար ԱՍԱԼԱ-ՔԲԿ» գիրքը, ուր մանրամասնորեն պատմվում է Արա Թորանյանի դեմ կազմակերպված մահափորձը: Պարզվում է, որ հայկական արդարադատության կոմանդոսների ղեկավարներից մեկի (պետք է լինի ԱՍԱԼԱ) Արա Թորանյանի դեմ երկու անգամ մահափորձ կազմակերպող խումբը մեծ մասամբ կազմված է եղել պետական պաշտոնյաներից: Վկայությունների անհրաժեշտության դեպքում պիտի ասպարեզ հանվի այն առասպելը, ըստ որի Ա. Թորանյանի դեմ մահափորձը կազմակերպել է Աբդուլա Չաթլին: Պարզվում է նաեւ, որ նույն խումբն է կազմակերպել 1988 թ. գնացքում սպանված ԱՍԱԼԱ-ի ղեկավար Հակոբ Հակոբյանի մահափորձը: Շատ հետաքրքիր է, թե պետական բարձրաստիճան պաշտոնյաներից որեւէ մեկը արդյոք կարդացե՞լ է Չիթլիողլու գիրքը եւ հետաքրքրվե՞լ, թե ինչ կա այս խնդրի խորքում: Բոլորովին չենք կարծում»:

«ԵՐԵՎԱՆ»

digitised by A.R.A.R.@

ՊՄԲԱԳԻԿ

ՄԱՄՈՒԼԻ ԸՆՏԱՆԻՔ

Լրագրողները մահոգված են Մերոժ Հարությունյանի պաշտոնանկությամբ

Մեր նախորդ համարում տեղեկացրել էինք «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի խմբագիր Մ. Հարությունյանի հրաժարականի մասին: Այդ տեղեկությունը, ինչպես պարզվում էր, խոր անհանգստություն պատճառեց լրագրողական շրջանակներին եւ նույնիսկ թերթի աշխատակազմին, ինչի արտահայտությունն են ստորեւ տպագրվող հայտարարությունները:

ԵՐԵՎԱՆ, 26 ՅՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ՁԼՄ ընկերակցությունը, Հայաստանի ժուռնալիստների միությունը եւ Երեւանի մամուլի ակումբն իրենց մահոգությունն են հայտնում «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի գլխավոր խմբագրի պաշտոնակատար Մերոժ Հարությունյանի պաշտոնանկության առնչությամբ: Այդ կապակցությամբ տարածված հայտարարությունում մասնավորապես ասվում է. «Արձանագրելով այն իրողությունը, որ վերջին մեկ տարում թերթը բազմակարծության ուղի էր դուրս եկել, դրանով իսկ էապես նպաստելով հայաստանյան մամուլում հանդուրժողականության մթնոլորտի կերտմանը, հիմնավոր մտավախություն ունենք, որ այս քայլը կարող է նահանջ նախանշել հիշյալ ձեռքբերումներից: Չբացառելով, որ պրն. Հարությունյանն իր ցանկությամբ է ազատվել զբաղեցրած պաշտոնից, կանխավ ցանկանում ենք նշել, որ մտահոգության տեղիք է տալիս հենց այն մթնոլորտը, որ նման ցանկություն է ծնում եւ փաստում, որ մասնագիտական որակն առաջնային չէ պաշտոնաթերթի խմբագրի ընտրության հարցում: Առավել ցավալի է, որ պաշտոնանկությունը համընկնում է երկրի ներքաղաքական կյանքում ստեղծված անորոշությանը, երբ, թվում էր, թե հենց հանդուրժողականությունն ու բազմակարծությունը պետք է դիտվեն որպես պետության կայունության ապահովման եւ իրավիճակի լիցքաթափման երաշխիքներ»:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի մի խումբ աշխատակիցների հայտարարությունը

Մ/թ հունվարի 23-ի երեկոյան «ՀՀ» գլխավոր խմբագրի պաշտոնակատար Մ. Հարությունյանին հրավիրել են ԱԺ եւ առաջարկել դիմում գրել պաշտոնից ազատվելու մասին, պատճառաբանելով, որ՝

1. Նա չի ներկայացրել թերթի ծրագիրը:

2. Վազգեն Սարգսյանի մեծադիր լուսանկարը տեղադրել է առաջին էջի վերեւում, իսկ Ե. Ստրոեւի եւ ՀՀ պաշտոնատար մի շարք անձանց համատեղ լուսանկարները՝ նույն էջի ստորին մասերում:

3. «Թերթը էն չի»:

Չնայած ՀՀ կանոնադրության 3.4 կետի համաձայն գլխավոր խմբագիրը միայն հաստատվում է հիմնադրի կողմից: ԱԺ նախագահի պահանջով Մերոժ Հարությունյանը ներկայացրել է դիմումը եւ ազատվել աշխատանքից:

«ՀՀ» օրաթերթի 1992 թ. սեպտեմբերի 9-ին վավերացված «ՀՀ օրաթերթի խմբագրության կանոնադրության» համաձայն՝

1. «ՀՀ» օրաթերթի համահիմնադիրներն են ՀՀ ԳԽ-ն (այժմ՝ նրա իրավահաջորդ ԱԺ-ն) եւ թերթի ստեղծագործական կոլեկտիվը (ընդհանուր դրույթներ),

2. օրաթերթը ղեկավարվում է ինքնակառավարման սկզբունքով (կազմակերպական կառուցվածք, կետ 3.2),



3. գլխավոր խմբագիրը հաստատվում է հիմնադրի կողմից (նույն ենթաբաժին, կետ 3.4):

Սա նշանակում է, որ օրաթերթի խմբագրի ընտրությանը պետք է մասնակցի նաեւ ստեղծագործական կոլեկտիվը, որի կարծիքը հիմնադրման պահից առ այսօր հաշվի չի առնվել:

Վերջին իրադարձությունները վկայում են, որ նոր խմբագրի նշանակման դեպքում կրկին ոտնահարվելու են ստեղծագործական կոլեկտիվի կանոնադրությամբ հաստատված իրավունքները, եւ նա չի մասնակցելու խմբագրի ազատմանն ու հաստատմանը:

«ՀՀ» օրաթերթի ստեղծագործական կոլեկտիվը՝ վրդովված նման վերաբերմունքից եւ կանոնադրությամբ իրեն տրված իրավունքի ոտնահարումից,

1. Համաձայն չէ Մ. Հարությունյանին աշխատանքից ազատելու որոշման հետ:

2. Ամբողջ իրավունքի չունի միանձնյա որոշել «ՀՀ» գլխավոր խմբագրին աշխատանքից ազատելու եւ նոր խմբագիր նշանակելու հարցը:

3. Պահանջում է, որ «ՀՀ» գլխավոր խմբագրի թեկնածուն առաջադրվի իր կողմից:

«ՀՀ» ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

(19 ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ՈԵՊԼԻԿ

Հայկական կողմի դիմադրության փոխարեն՝ արցախյան համառությո՞ւն

ՀՀՇ վարչությունն, ի տարբերություն «կազմալուծված» եւ «անփութորեն անտարբեր» կառավարության, գրեթե ակնթարթորեն արձագանքեց նախորդ շաբաթվա ահաբեկչությունների «ցնցող» շղթային (ահաբեկիչների միակ, ի դեպ, իսկապես ցավալի «ձեռքբերումը» ՆԳ եւ ԱԱ փոխնախարար Արծրուն Մարգարյանի ոտքի վնասվածքն էր, որ ՀՀՇ վարչության նախագահի կարծիքով, «շարից հանել» է գեներալին)՝ փորձելով քվության նոխազ դարձնել դարաբաղյան կարգավորման ծիրում նախագահից տարբեր դիրքորոշում որդեգրած դարաբաղցի վարչապետին եւ, նույնպես դարաբաղցի ուժային նախարարին, ըստ այդմ, թերեւս, չեզոքացնել «դարաբաղյան վտանգը»: Այդ մասին բավական սպառիչ արտահայտվեց ոչ դարաբաղցի ուժային նախարար Վազգեն Սարգսյանն իր «հազվադեպ, բայց դիպուկ» մամուլի ասուլիսում:

Սակայն ՀՀՇ վարչության «օպերատիվ», 1988 թ. հանրահավաքների երկարաբուն հայտարարությունները հիշեցնող հայտարարության որոշ կետեր, այնուամենայնիվ, արժանի են «հատուկ» ուշադրության, քանզի, մի կողմից հաստատագրելով արցախահայության ինքնորոշման պայքարի հաջող ընթացքին ՀՀՇ-ի նվիրվածությունը եւ նույնիսկ «չբացառելով ռազմական ուժի կիրառումը Արցախի սուվերենության եւ բնակչության անվտանգությանն սպառնացող անմիջական վտանգի դեպքում», այդ հարցում իր սկզբունքներն ու մտահոգություններն արձանագրելիս վերահաստատում է խնդրի կարգավորման գործընթացում Հայաստանի կրավորական կեցվածքը. «Հայաստանը չի ստորագրի որեւէ պայմանագիր, որի տակ չի լինի Արցախի ստորագրությունը»: Արցախյան խնդրում Հայաստանի դիվանագիտության հիմքում դրված այս վիճահարույց հիմնադրույթը ոչ միայն ռուսական "Моя хата с краю" ասացվածքի ոգով է, այլեւ միջազգային բոլոր ճնշումներն Արցախի վրա սեւեռելու ենթատեքստ ունի. «Համոզեք Արցախին (ոլորտ Արցախի թեւերը) եւ Հայաստանի հետ խնդիր չեք ունենա»: Սա, թվում է, որոշակիորեն կանխորոշում է բանակցությունների ոչ հայանպաստ ընթացքը (երբ իբրեւ հաղթանակ ներկայացվում է այս իրողությունը, որ ԵԱՀԿ հերթական գագաթաժողովում աշխարհի հզորները Հայաստանի վրա մաս թափ չեն տալիս), քանզի հայկական կողմի դիմադրությունը սահմանափակում է արցախյան (նույնիսկ բանակցությունների կողմ չճանաչված) հատվածի «համառությամբ»: Առհասարակ, այդ ծեւակերպումը, Արցախի ղեկավարության կողմից բազմիցս արտահայտված «անհնազանդ» դիրքորոշման առկայությամբ, ժամանակավրեպ է հնչում.

«Անվիճելի պահանջ համարելով արցախահայության անվտանգ ու բարգավաճ գործունեությունը իր պատմական հայրենիքում» դրույթը նույնպես (ոչ թե ինքնին, այլ իբրեւ խնդրի կարգավորման հիմնաքար) մտահոգության տեղիք է տալիս, եւ, թեեւ նորություն չէ, բայց հաճախակի կրկնվելով, անախորժության զգացում առաջացնում: Եթե անվտանգ ու բարգավաճ գոյությունն (առանց անկախության) ազգային իղձերի բարձրակետերից է, ապա ի՞նչ կարիք կար ժամանակին, անկախության հանրաքվեի միջոցով անջատվել ԽՍՀՄ-ից: Չէ՞ որ անվտանգ էինք ապրում, տարիների հեռվից՝ նաեւ անհամեմատ ավելի բարգավաճ, քան այսօր, վաղը, գուցե, տասնամյակներ հետո: Ի՞նչ կարիք կա այսօր աղմկել, թե կոմունիստները դարձյալ ուզում են Հայաստանը Ռուսաստանի գիրկը նետել, վերականգնել Մոսկվայի իշխանությունը, եւ այլն, եւ այլն: Չէ՞ որ կոմունիստների փաստարկը հօգուտ նոր միության նույնն է՝ անվտանգ ու բարգավաճ գոյություն: ՀՀՇ լիդերներն ինչո՞ւ են համարում, թե հայության միայն հայաստանյան հատվածը, գոյատեւելուց զատ, նաեւ սեփական ճակատագիրը կերտելու իրավունք ունի:

Հայրենասիրական ճարտասանությունն ամենեւին էլ դիվանագիտություն չէ, իհարկե (ինչպես ասվում է հայտարարության մեջ), բայց նվազագույն ակնկալիքներով «առավել շահեկան» լուծումներ գտնելու ուզմավարությունը նույնպես դիվանագիտական հաղթանակների երաշխիք չէ, եւ արժե, թերեւս, օրինակ վերցնել ադրբեջանական կողմից, որը 1988-ից այս կողմ երբեւէ չհրաժարվեց իր maximum-նկրտումներից, որոնց գագաթնակետը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «լուծարումն» էր, որ հող նախապատրաստեց այսօրվա «փոխզիջման»՝ Արցախին ինքնավարություն շնորհելու պատրաստակամության համար):

Թե չէ՝ «ոլորտ Արցախի ձեռքերը», «ասպետագրության երաշխիսներ արցախի համար»... Այս կարգախոսներով արցախյան «սայլը» տեղից շարժելը, հպմենայն դեպս, հայերին հարմար ուղղությամբ, դժվար կլինի, եթե ոչ անհնար.

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱԺՄ-ն ճգնաժամը վերացնելու նախապայման է համարում նախագահի հրաժարականը

Հունվարի 26-ին ԱԺՄ-ն հանդես եկավ հայտարարությամբ, որը «ճգնաժամից դուրս գալու միակ ուղին համարում է վերադարձը ժողովրդավարական ուղուն, ազգային համաձայնության մթնոլորտում ազատ եւ արդար ընտրությունների անցկացումը, ինչի առաջնահերթ նախապայմանը Լ. Տեր-Պետրոսյանի անհապաղ հրաժարականն է»:

Հայտարարության մեջ նշվում է, որ երկիրը պատարած բոլոր տեսակի ճգնաժամերը՝ ազգային, տնտեսական, սոցիալական, Լ. Տեր-Պետրոսյանի քաղաքականության տրամաբանական արդյունքն են: Իշխող վերնախավի անհեռանկար սոցիալ-տնտեսական հանցավոր քաղաքականությունը առաջացրել է արդյունաբերության եւ գյուղատնտեսության ջլատում, պետության եւ հասարակության ուսերին է կուտակվում հսկայական արտաքին պարտքը: Հայտարարության մեջ եւս մեկ անգամ դատապարտվում է «իշխանությունն ամեն գնով պահելու» քաղաքականությունը եւ ոչ «հեռավոր անցյալում նրա բիրտ դրսեւորումները: Ուստի եւ նման քաղաքականությունը որդեգրած նախագահի յուրաքանչյուր օրը եւ ժամը համարվում է կորուսաբեր:

«ԱԺՄ-ն, ասվում է հայտարարության վերջում, հենվելով ժողովրդի լայն զանգվածների, երկրի ապագայով մտահոգ քաղաքական ուժերի աջակցության վրա, հետամուտ է այս ծրագրի իրականացմանը»:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՅՑ

Լոռեցիները «գործ չունեն Երեւանի տարաձայնությունների հետ»

Անցած ուրբաթ եւ շաբաթ օրերին աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանը: Նրան ուղեկցում էին նախարարներ, ԱԺ պատգամավորներ, պաշտոնական այլ անձինք: Վանաձորցիներն առանձնահատուկ վերաբերմունք ունեն Ռ. Քոչարյանի նկատմամբ, քանզի նա առաջին անգամ Վանաձորից է ընտրվել Գերագույն խորհրդի պատգամավոր: Վարչապետը եղավ Սպիտակի Ջրաբեռ եւ Սարամեջ գյուղերում, այցելեց Սպիտակի վերելակների գործարան, հանդիպումներ ունեցավ Սպիտակի քաղաքապետարանում, այնուհետեւ՝ Ստեփանավանի քաղաքապետարանում: Նույն օրը պատվիրակությունը եղավ նաեւ Տաշիրում: Շաբաթ օրը Վանաձորի եւ Թումանյանի ենթաշրջանի որոշ արդյունաբերական ձեռնարկություններ եւ բուժհիմնարկներ այցելելուց հետո, երեկոյան Լոռու մարզպետարանում տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցում էին Լոռու մարզպետը, Վանաձորի քաղաքապետը, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների ու համայնքների ղեկավարներ: Հրավիրված էին նաեւ լրագրողներ: Վարչապետը այլ հարցերի թվում խոսեց առանձին նախարարությունների գործունեության, մարզերում մանր եւ միջին բիզնեսի զարգացման խնդիրների մասին, անդրադառնալով նաեւ ՀՀ կառավարության հայթայթած ֆինանսական այլ միջոցներին, որոնք կներգրավվեն ադեցի գոտու արդյունաբերական ձեռնարկությունները գործարկելու եւ տնտեսությունը զարգացնելու համար: Նա կարեւորեց նաեւ երկրաբարժի տասնամյակի կապակցությամբ մշակվող ծրագրերին: Ռ. Քոչարյանն անդրադարձավ նաեւ էներգետիկայի, կոմունալ տնտեսության հիմնահարցերին, շեշտելով վարձավճարների գանձման ճիշտ մեխանիզմներ գործադրելու անհրաժեշտությունը: Իսկ Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակի մասին նա ասաց. «Երեւանի տարաձայնություններ հետ դուք գործ չունեք, Երեւանում կարող է վիճեն, բարիշեն, դուք գործ չունեք: Ձեր մարզի գործունեությունը որեւէ կապ չպետք է ունենա քաղաքական իրավիճակների հետ»: Իսկ երբ եկավ վարչապետին հարցեր տալու ժամանակը, նա խնդրեց մանր-մունր հարցեր չտալ: Քանի որ լոռեցիներս «գործ չունենք» խոշոր հարցերի հետ (անկեղծ ասած, երբեւէ գործ էլ չենք ունեցել), «մանր-մունր» հարցերով էլ դիմող չեղավ: Շաբաթ երեկոյան Ռ. Քոչարյանի ղեկավարած պատվիրակությունը մեկնեց մայրաքաղաք՝ լուծվող եւ չլուծվող խոշոր հարցերի խառնարանը: Իսկ մեզ մնում էր միայն բարի ճանապարհ ասել:

ՄԱՆՎԵԼ ՄԻՔԱՅԱՆ

Սրմեն Դարբինյանը «տարվա երիտասարդ մարդ»

ԵՐԵՎԱՆ, 26 ՅՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «Նովոյե վրեմյա» թերթի «Նովոյե պոկոլենիե» անդրկովկասյան երիտասարդական հավելվածի կողմից Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի լրագրողների շրջանում անցկացվել է հարցում «Տարվա երիտասարդ մարդը» խորագրով: Հարցման նպատակն էր որոշել 1997 թ. ընթացքում «հասարակական գիտակցության մեջ առավել զգալի հետք թողած» մինչեւ 35 տարեկան այն գործչին, որն ամենալայն ժողովրդայնությունն է վայելում իր երկրում:

Հարցման արդյունքներով Վրաստանում «տարվա մարդ» է ճանաչվել երկրի խորհրդարանի նախագահ 34-ամյա Զուրաբ Ժվանիան, Ադրբեջանում սամբո ըմբշամարտի աշխարհի 7-ակի եւ Եվրոպայի 6-ակի չեմպիոն Զեյխուն Սամեդովը: Հայաստանի լրագրողները «տարվա երիտասարդ մարդ» են ճանաչել ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Սրմեն Դարբինյանին:

«Տարվա մարդկանց» հետ հարցազրույցները, ինչպես նաեւ հարցման մանրամասները կարելի է կարդալ «Նովոյե պոկոլենիե» հավելվածի առաջին համարում, որը լույս կտեսնի մոտ օրերս:

Ազգին՝ այո, միայն տղաներ

Հակոբ Ասատրյան-Աննա Կարապետյան բառիս իսկական իմաստով լրագրողական ընտանիքն օրերս վերահաստատեց, որ **«Ազգը»** ազգին միայն տղաներ է նվիրում. հեռավոր Պրահայում ծնվեց «Ազգի» հիմնադիր աշխատակից Հակոբ Ասատրյանի առաջնեկը՝ Վահե Ասատրյանը, որը, հուսով ենք, կհամալրի հայ լրագրողների համաստեղությունը:

«Ազգի» խմբագրությունն ամենայն սիրով առողջություն եւ երկար կյանք է մաղթում փոքրիկին եւ նորանոր «սխրանքներ» մեր գործընկերներին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ / հեռ. 521635
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Նյութը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՄԲԱՑԻԿ

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Երեւանյան գիտաժողովն անդրադարձավ հայ-գերմանական առնչություններին

Դեկտեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի նիստերի դահլիճում հրավիրվեց հայ-գերմանական առնչություններին նվիրված գիտաժողով: Դա կազմակերպվել էր Բարձր տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից: Գիտաժողովը բացեց հիմնադրամի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Վլադիմիր Հարությունյանը «Գերմանիայի դաղափարությունը ԵԱՀԿ-ում ուղղված դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցին» զեկուցումով: Պրն Հարությունյանն իր զեկուցման մեջ հանգամանալից անդրադարձավ ԵԱՀԿ-ում Գերմանիայի առանցքային դերին, նրա կողմից Անդրկովկասի նկատմամբ հետզհետե դրսեւորվող հետաքրքրություններին եւ ռազմաքաղաքական այն շահերին, որ նա հետապնդում է տարածաշրջանում: Զեկուցողը հատուկ ուշադրություն դարձրեց հայ-գերմանական հարաբերություններին, եւ դրանց ակտիվացման ֆոնի վրա փորձեց վերլուծել դարաբաղյան հակամարտության կարգավորումը Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքով դայմանավորելու գերմանական իշխանությունների միտումները, դրանց դատճառները եւ զարգացման հնարավոր ուղղությունները: Այնուհանդերձ, զեկուցողն ընդգծեց, որ Գերմանիայում գործող ոչ բոլոր կուսակցություններն են դաշտպանում գերմանական իշխանությունների տեսակետը եւ առանձնակի կարեւորեց այդ կուսակցությունների հետ համադասասխան աշխատանքների կատարման անհրաժեշտությունը:

Վլադիմիր Հարությունյանի զեկուցմանը հետեւեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, դատմական գիտությունների դոկտոր, դրոֆեսոր Վարդգես Միքայելյանի զեկուցումը «Հայերի ցեղասպանությունը Թուրքիայում, ըստ գերմանական դիվանագետների զեկուցագրերի» խորագրով: Ակադեմիկոս Միքայելյանի զեկուցումը, որ կառուցված էր գերմանական արխիվային փաստաթղթերի վրա, երեւան հանելով կայզերական Գերմանիայի համագործակցությունը երիտթուրքերի հետ, միաժամանակ բացահայտում էր գերմանական իշխանությունների մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ: Այդ առումով ակադեմիկոսին լրացնելու եկավ դատմական գիտությունների դոկտոր, դրոֆեսոր Ստեփան Ստեփանյանը: Նա «Հայկական հարցը եւ Գերմանիան 19-րդ դ. վերջին, 20-րդ դ. սկզբին» խորագրով զեկուցման մեջ, ընդգծելով հանդերձ առաջադիմական ուժերի դաղաքական ու գիտական առաջադեմ գործիչների առկայությունը գերմանական իշխանություն

ԱԶԳ

Ամփոփում

Պաշտպանության նախարարը գրում է ամպերը

Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հայրենասիրությունն ու անձնական խիզախությունը, ազգային բանակի կայացման գործում նրա անուրանալի ծառայությունները երբեւէ կասկածի տեղիք չեն տվել, ընդունվել են նույնիսկ անբարյացակամների կողմից: Սակայն նախարարն իբրեւ քաղաքական դեմք «ծնվեց» ընդամենը անցյալ ուրբաթ իր անցկացրած մամուլի ասուլիսով, երբ քաղաքացիական քաջություն ունեցավ հանրության առաջ ազնվաբար շարադրելու սեփական տեսակետները արցախյան հակամարտության քաղաքական կարգավորման գործընթացի եւ հանրապետությունում վերջին շրջանում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակի կապակցությամբ:

Նախարարը բարձրագույն ոլորտներին պատկանող առաջին գործիչն է, որ հրապարակավ սահմանազատվեց նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածի (1 նոյեմբերի, 1997 թ.) վիճելի որոշ դրույթներից, առանց անունը տալու նախագահին ուղղակի մեղադրելով արցախահայության եւ հայաստանահայության միջեւ «սեղմ խրելու» մեջ: Շընդունելով Հայաստանի տնտեսական ծանր վիճակը արցախյան հիմնահարցով բացատրելու նախագահական թեզը, նախարարը իրավացիորեն մատնանշեց հենց Հայաստանի իշխանությունների վատ ախտանիշը իբրեւ այդ վիճակի պատճառ, մի բան, որը երբեք չեն խոստովանել եւ չեն ընդունել ուրիշ բարձրատիճան պաշտոնատարներ: Բարոյապես սատարելով վարչապետ Ռոբերտ Քոչարյանին եւ ՆԳ ու ԱԱ նախարար Սերժ Սարգսյանին, Վազգեն Սարգսյանն անվարան ընդգծեց, որ ինքն ամուր կանգնած է ազգը պառակտելու եւ դրանով իսկ Արցախը թուլացնելու, արցախահայության ազգային-ազատագրական տասնամյա հերոսական պայքարի նվաճումներից հրաժարվելու, Այրբեջանին միակողմանի զիջումներ անելու գծի դեմ: Հատկանշական է, որ նա նաեւ փաստորեն քննադատեց նախագահին արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցը հրապարակային բանավեճի առարկա դարձնելու համար, քանի դեռ միասնական կարծիք չի մշակվել ոչ միայն ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարության միջեւ, այլեւ հարցը չի քննարկվել ՀՀ ընդդիմության հետ, որից հետո միայն, ըստ նրա, «եթե չէր գտնվի լուծում, պրպտեն սարբեր տեսակետներ, բայց արդեն ծեւակերպված, կներկայացվեին ժողովրդի դատին հանրաքվեի տարբերակով»:

Ակնհայտորեն ի պատասխան նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ամանորյա ուղերձում պարուրակված հայտարարությունների, քանի որ հասարակական կարծիքը Հայաստանում, Ղարաբաղում եւ Սփյուռքում հիմնախնդրի կարգավորման առումով տրամագծորեն հակառակ որոշման է հանգել:

Բարոյահոգեբանական հաջորդ գործոնը, որն անտեսել է Տեր-Պետրոսյանը, այն է, որ 10-ամյա զրկանքների, զոհերի, մատաղների արդյունքում հայ ժողովուրդը չի կարող հաշտվել առաջարկվող տարբերակի մտքի հետ անգամ:

Երրորդ գործոնը այն է, որ տեւականորեն ջլատելով ժողովրդի հավատը սեփական ուժերի, նպատակներ, հասարակությունն ու միջազգային կարծիքը «ուլտրանացիոնալիզմով», «ֆաշիզմի վտանգով» խրտնեցնելու փորձերը եւս ամրագրյուն անցան: Սրբեցուցիչ էր մինչեւ անգամ ժողովրդի հաղթանակները համառորեն չընդունելու Տեր-Պետրոսյանի ձգտումը, քաղաքական հաշվարկը եւ պրագմատիզմը պատրանքներ եւ «թե»-ական իրավիճակ չի հանդուրժում, ուստիեւ նա չէր կարող նման բան ակնկալել միջազգային հանրությունից: Տեր-Պետրոսյանն անկեղծ էր, եւ հավատում էր, երբ որոշեց դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հիմնական պատճառ հիշատակում էր Հայաստանի տնտեսական վիճակը: Նախագահը, թերեւս, հույս ուներ, որ որեւէ կերպ սառեցնելով հիմնախնդիրը, կարող է արտաքին ներդրումների առջեւ բացել ճանապարհը եւ կամ ակնկալել նավթամուղի անցկացումը Հայաստանի տարածով, ինչն էլ զարկ կտար երկրի տնտեսական զարգացմանը, որից հետո, ըստ Տեր-Պետրոսյանի, կարելի էր լուծել նաեւ Ղարաբաղի հարցը: Եվ հենց այստեղ էլ նրա պրագմատիզմը չտվեց ու չի տալու ցանկալի պտուղներ հիմնականում այն պատճառով, որ նա անտեսեց այդորինակ դիրքորոշման բարոյահոգեբանական հետեւանքները եւ հասարակական արձագանքները, քանի որ հասարակական կարծիքը Հայաստանում, Ղարաբաղում եւ Սփյուռքում հիմնախնդրի կարգավորման առումով տրամագծորեն հակառակ որոշման է հանգել:

Բարոյահոգեբանական հաջորդ գործոնը, որն անտեսել է Տեր-Պետրոսյանը, այն է, որ 10-ամյա զրկանքների, զոհերի, մատաղների արդյունքում հայ ժողովուրդը չի կարող հաշտվել առաջարկվող տարբերակի մտքի հետ անգամ:

Երրորդ գործոնը այն է, որ տեւականորեն ջլատելով ժողովրդի հավատը սեփական ուժերի, նպատակներ, հասարակությունն ու միջազգային կարծիքը «ուլտրանացիոնալիզմով», «ֆաշիզմի վտանգով» խրտնեցնելու փորձերը եւս ամրագրյուն անցան: Սրբեցուցիչ էր մինչեւ անգամ ժողովրդի հաղթանակները համառորեն չընդունելու Տեր-Պետրոսյանի ձգտումը, քաղաքական հաշվարկը եւ պրագմատիզմը տվյալ դեպքում անցնում էին ընդունելի սահմանները որոշ դեպքերում բախվելով ազգի արժանապատվությանը: Եվ՝ թեպետ 96 թ. նախագահական երդման մեջ նա հավաստում էր, թե պետք է «բարձրացնել ազգի բարոյական ոգին, ամրապնդել ու խորացնել նրա հավատը սեփական ուժերի նկատմամբ», սակայն հաջորդ իսկ պահին ընդգծում էր «Պետականությունը վեր դասել ազգային ու քաղաքական բոլոր գաղափարներից»:

Այս դիրքորոշումն էլ դարձավ Տեր-Պետրոսյանի տեսական դատողությունների եւ քաղաքական գործունեության փորձաքարը, որի վրա էլ գայթեց այդ գործունեությունը: Թվում էր, թե կարելի է գրեթե անկորուստ անցնել բոլոր ճանապարհները, սահմանափակել ազատությունը, արհամարհել արդարությունը եւ սոցիալական հիմնախնդիրները: Ժողովուրդը դիմագրավեց եւ հաղթահարեց, թեպետ հավատի կորուստ գնով, բոլոր հուսախաբությունները, դե ֆակտո ընդունեց նաեւ անջրպետը իր եւ իշխանությունների միջեւ, հաշտվեց մինչեւ անգամ իր կամքի անտեսման հետ, սակայն ամենազգայուն նյարդը արագ զգացել տվեց, երբ ազգայինը տեղափոխվեց «կեղծ կատեգորիաների» համակարգը եւ փորձ արվեց դնել այն գործողության մեջ: Ղարաբաղյան հիմնախնդիրը վերջին 10 տարվա ընթացքում դարձավ ազգային արժանապատվության ու արժեքների խտացումը, եւ որեւէ ընդում, որեւէ կորուստ, որեւէ նահանջ չէր կարող ընդունել:

Կա նաեւ չորրորդ գործոնը «Մենք չենք կարող բաժնվել պատմությունից», ընդգծում էր ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինկոլնը: Այս ճշմարտությունը, որպես երկրի նախագահ եւ որպես պատմաբան, լավ գիտեր նաեւ Տեր-Պետրոսյանը, բայց ի զարմանս շատերի, նա փորձեց դեմ գնալ պատմության տրամաբանությանը ներկային զոհաբերելով իր հեղինակությունը, իսկ պատմությանը՝ նրա գնահատականը:

Նախագահի հաշվարկն ու կանխատեսումները չարդարացան մինչեւ անգամ ներհիշանական փոխհարաբերությունները վերլուծելիս-գնահատելիս: Ներքաղաքական կյանքում ճգնաժամի բացառումը Տեր-Պետրոսյանի կողմից բացատրվում էր նրանով, որ յուրաքանչյուր ճգնաժամ նրան հաջողվել է հաղթահարել վերջին պահին ֆիգուրների փոփոխություններով: Այդ քայլը չաշխատեց այսօր, երբ նախագահն իրեն գտավ քաղաքական աննախադեպ մեկուսացման մեջ մերժված անգամ իր երեկվա թիմակիցների, իր հենասյուների կողմից: Ջրբաժանը, որն այսօր անցնում է նախագահի եւ ուժային կառույցների ղեկավարների, նախագահի եւ ընդդիմության, նախագահի եւ հասարակության միջեւ, թելադրված է Տեր-Պետրոսյանի կողմից ազգային արժեքների տեւական մերժմամբ: Եվ որովհետեւ Ղարաբաղն է այսօր ազգայինի խտացումը, ուստիեւ ջրբաժանը գծվել է հենց հիմնախնդրի կարգավորման տրամագծորեն տարբեր ուղիների նախանշման հետեւանքով:

Դժվար է միանշանակ պնդել, թե որն է եղել Տեր-Պետրոսյանի հաշվարկն այս դեպքում: հասարակության տեւական իներտությունն ու պահպանողականությունը՝ առանց հոգսերով ծանրաբեռնված լինելը, թիմակիցների հանդեպ աներկբա վստահությունը, կոմորտմատների գոյությունը, ներկայացուցչական հակակշիռների բացակայությունը, հասարակական կարծիք ձեւավորող մամուլի տնտեսական անհեռանկար վիճակը, ցանկացածին եւ ցանկացած պահին իշխանությամբ հավատարելու փորձը: Դժվար է նախանշել պատճառը, սակայն պարզ է, որ առաջացած եւ խորացող ջրբաժանը Տեր-Պետրոսյանի պարտությունն է, որի դառը դեղահաբերը նա ստիպված է միայնակ կուլ տալ:

Թեպետ անստվաստելի չէ, սակայն առնվազն տարակուսելի է Հայաստանի խորհրդարանի Ազգային ժողովի վարքագիծը: Տրամաբանության եւ քաղաքականության կանոնների համաձայն ներքաղաքական զարգացումները, լիցքերը եւ կրքերը պետք է խտանային այնտեղ եւ ծայր առնեին այնտեղից: Սակայն ԱԺ-ն ընդհանրապես դուրս մնաց ուղեծրից՝ իրեն դնելով անանխանձելի վիճակում: Եվ նորից, հերթական անգամ հառնեցին «մոռացված ընտրությունների սվերները» («Սոսկովսկիե նովոստի» շաբաթաթերթն այդպես է բնութագրել ռուսական երկրամասերից մեկում ստեղծված իրավիճակը): Եվ այսօր Տեր-Պետրոսյանը չի կարող վարվել այնպես վստահ, ինչպես 1990 թ. ՀԱԲ-ի արգելման եւ արտակարգ դրություն մտցնելու ժամանակ, երբ նրա յուրաքանչյուր քայլը հասարակության գերակշիռ մասը համարում էր ճշգրիտ եւ արդարացված: Տեր-Պետրոսյանի քաղաքական կուրսը, մեղմ ասած, չի վայելում հասարակության մեծ մասի աջակցությունը, եւ վստահության էջեր նա չի կարող ակնկալել բոնություններ եւ կասեցումներ իրականացնելիս: Այլեւս արդյունք չի տա նաեւ կաղրային ջարդը:

Այս աննախադեպ իրավիճակում Տեր-Պետրոսյանը դեռեւս քայլեր ունի: Նախագահը կարող է գրել Ազգային ժողովը եւ նշանակել վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ: Այս քայլը նոր լիցքեր կհաղորդի ներքաղաքական լարված իրավիճակին, սակայն դրանք միայն դրական լիցքեր կլինեն:

Բացի այդ, Տեր-Պետրոսյանը պետք է թե միջազգային հանրության, թե հայ ժողովրդի առջեւ հայտարարի, որ Ղարաբաղի հիմնախնդիրը չի կարող լուծել որեւէ դեկավար, այդ թվում եւ ինքը դեմ գնալով ժողովրդի կամքին, հակառակ դեպքում կվտանգվի տարածաշրջանի կայունությունը:

Խորհրդարանական ընտրություններից հետո ընդդիմությունը թերեւս պահանջի նախագահական ընտրություններ: (Բայց սա այլ խոսակցության նյութ է:) Հակառակ դեպքում, նախագահի հրաժարականի պահանջը շարունակելու է հնչել, եւ թերեւս ավելի ու ավելի հաստատորեն:

Հայաստանում քաղաքական համակարգը պետք է փոխվի, իսկ ազգային արժեքային համակարգը որվի պետականության հիմքում, սա է ջրբաժաններից խուսափելու ճանապարհը:

ՆԱՐԵՆ ՄԱՐՏՈՅԱՆ

Ջրբաժան

ՀՀ նախագահը դեռեւս քայլեր ունի ներքաղաքական ճգնաժամը հաղթահարելու

Ոչ, սա խաղ չէ: ՀՀ Անվտանգության խորհրդի վերջին նիստում, ըստ որոշ լուրերի, հայտարարել է Լեւոն Տեր-Պետրոսյանը ի պատասխան ԱԺ երկու փոխնախագահների ներկաներին ուղղված հանգստարար հորդորների, թե իբր դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ՀՀ նախագահի առաջարկած տարբերակն ու բանավեճը ընդամենը խաղ է: Իրոք, որ այս ամենը հեռու էր խաղ լինելուց, հուշում էին ներքաղաքական զարգացումները, ներհիշանական բարդ եւ հակասություններով աղեցուն հարաբերությունները:

Ինչո՞ւ էր, այնուամենայնիվ, նախագահ Տեր-Պետրոսյանը բացահայտ պնդում իր տարբերակը եւ հրահրում բանավեճ: Միամտություն է կարծել, թե բանավեճի հետեւանքով առաջացած աղմուկը միջազգային հանրությանը լսելի դարձնելու համար էր: Տեր-Պետրոսյանի պրագմատիզմը պատրանքներ եւ «թե»-ական իրավիճակ չի հանդուրժում, ուստիեւ նա չէր կարող նման բան ակնկալել միջազգային հանրությունից: Տեր-Պետրոսյանն անկեղծ էր, եւ հավատում էր, երբ որպես դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հիմնական պատճառ հիշատակում էր Հայաստանի տնտեսական վիճակը: Նախագահը, թերեւս, հույս ուներ, որ որեւէ կերպ սառեցնելով հիմնախնդիրը, կարող է արտաքին ներդրումների առջեւ բացել ճանապարհը եւ կամ ակնկալել նավթամուղի անցկացումը Հայաստանի տարածով, ինչն էլ զարկ կտար երկրի տնտեսական զարգացմանը, որից հետո, ըստ Տեր-Պետրոսյանի, կարելի էր լուծել նաեւ Ղարաբաղի հարցը: Եվ հենց այստեղ էլ նրա պրագմատիզմը չտվեց ու չի տալու ցանկալի պտուղներ հիմնականում այն պատճառով, որ նա անտեսեց այդորինակ դիրքորոշման բարոյահոգեբանական հետեւանքները եւ հասարակական արձագանքները, քանի որ հասարակական կարծիքը Հայաստանում, Ղարաբաղում եւ Սփյուռքում հիմնախնդրի կարգավորման առումով տրամագծորեն հակառակ որոշման է հանգել:

Բարոյահոգեբանական հաջորդ գործոնը, որն անտեսել է Տեր-Պետրոսյանը, այն է, որ 10-ամյա զրկանքների, զոհերի, մատաղների արդյունքում հայ ժողովուրդը չի կարող հաշտվել առաջարկվող տարբերակի մտքի հետ անգամ:

Երրորդ գործոնը այն է, որ տեւականորեն ջլատելով ժողովրդի հավատը սեփական ուժերի, նպատակներ, հասարակությունն ու միջազգային կարծիքը «ուլտրանացիոնալիզմով», «ֆաշիզմի վտանգով» խրտնեցնելու փորձերը եւս ամրագրյուն անցան: Սրբեցուցիչ էր մինչեւ անգամ ժողովրդի հաղթանակները համառորեն չընդունելու Տեր-Պետրոսյանի ձգտումը, քաղաքական հաշվարկը եւ պրագմատիզմը տվյալ դեպքում անցնում էին ընդունելի սահմանները որոշ դեպքերում բախվելով ազգի արժանապատվությանը: Եվ՝ թեպետ 96 թ. նախագահական երդման մեջ նա հավաստում էր, թե պետք է «բարձրացնել ազգի բարոյական ոգին, ամրապնդել ու խորացնել նրա հավատը սեփական ուժերի նկատմամբ», սակայն հաջորդ իսկ պահին ընդգծում էր «Պետականությունը վեր դասել ազգային ու քաղաքական բոլոր գաղափարներից»:

Այս դիրքորոշումն էլ դարձավ Տեր-Պետրոսյանի տեսական դատողությունների եւ քաղաքական գործունեության փորձաքարը, որի վրա էլ գայթեց այդ գործունեությունը: Թվում էր, թե կարելի է գրեթե անկորուստ անցնել բոլոր ճանապարհները, սահմանափակել ազատությունը, արհամարհել արդարությունը եւ սոցիալական հիմնախնդիրները: Ժողովուրդը դիմագրավեց եւ հաղթահարեց, թեպետ հավատի կորուստ գնով, բոլոր հուսախաբությունները, դե ֆակտո ընդունեց նաեւ անջրպետը իր եւ իշխանությունների միջեւ, հաշտվեց մինչեւ անգամ իր կամքի անտեսման հետ, սակայն ամենազգայուն նյարդը արագ զգացել տվեց, երբ ազգայինը տեղափոխվեց «կեղծ կատեգորիաների» համակարգը եւ փորձ արվեց դնել այն գործողության մեջ: Ղարաբաղյան հիմնախնդիրը վերջին 10 տարվա ընթացքում դարձավ ազգային արժանապատվության ու արժեքների խտացումը, եւ որեւէ ընդում, որեւէ կորուստ, որեւէ նահանջ չէր կարող ընդունել:

Կա նաեւ չորրորդ գործոնը «Մենք չենք կարող բաժնվել պատմությունից», ընդգծում էր ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինկոլնը: Այս ճշմարտությունը, որպես երկրի նախագահ եւ որպես պատմաբան, լավ գիտեր նաեւ Տեր-Պետրոսյանը, բայց ի զարմանս շատերի, նա փորձեց դեմ գնալ պատմության տրամաբանությանը ներկային զոհաբերելով իր հեղինակությունը, իսկ պատմությանը՝ նրա գնահատականը:

Նախագահի հաշվարկն ու կանխատեսումները չարդարացան մինչեւ անգամ ներհիշանական փոխհարաբերությունները վերլուծելիս-գնահատելիս: Ներքաղաքական կյանքում ճգնաժամի բացառումը Տեր-Պետրոսյանի կողմից բացատրվում էր նրանով, որ յուրաքանչյուր ճգնաժամ նրան հաջողվել է հաղթահարել վերջին պահին ֆիգուրների փոփոխություններով: Այդ քայլը չաշխատեց այսօր, երբ նախագահն իրեն գտավ քաղաքական աննախադեպ մեկուսացման մեջ մերժված անգամ իր երեկվա թիմակիցների, իր հենասյուների կողմից: Ջրբաժանը, որն այսօր անցնում է նախագահի եւ ուժային կառույցների ղեկավարների, նախագահի եւ ընդդիմության, նախագահի եւ հասարակության միջեւ, թելադրված է Տեր-Պետրոսյանի կողմից ազգային արժեքների տեւական մերժմամբ: Եվ որովհետեւ Ղարաբաղն է այսօր ազգայինի խտացումը, ուստիեւ ջրբաժանը գծվել է հենց հիմնախնդրի կարգավորման տրամագծորեն տարբեր ուղիների նախանշման հետեւանքով:

Դժվար է միանշանակ պնդել, թե որն է եղել Տեր-Պետրոսյանի հաշվարկն այս դեպքում: հասարակության տեւական իներտությունն ու պահպանողականությունը՝ առանց հոգսերով ծանրաբեռնված լինելը, թիմակիցների հանդեպ աներկբա վստահությունը, կոմորտմատների գոյությունը, ներկայացուցչական հակակշիռների բացակայությունը, հասարակական կարծիք ձեւավորող մամուլի տնտեսական անհեռանկար վիճակը, ցանկացածին եւ ցանկացած պահին իշխանությամբ հավատարելու փորձը: Դժվար է նախանշել պատճառը, սակայն պարզ է, որ առաջացած եւ խորացող ջրբաժանը Տեր-Պետրոսյանի պարտությունն է, որի դառը դեղահաբերը նա ստիպված է միայնակ կուլ տալ:

Թեպետ անստվաստելի չէ, սակայն առնվազն տարակուսելի է Հայաստանի խորհրդարանի Ազգային ժողովի վարքագիծը: Տրամաբանության եւ քաղաքականության կանոնների համաձայն ներքաղաքական զարգացումները, լիցքերը եւ կրքերը պետք է խտանային այնտեղ եւ ծայր առնեին այնտեղից: Սակայն ԱԺ-ն ընդհանրապես դուրս մնաց ուղեծրից՝ իրեն դնելով աննախանձելի վիճակում: Եվ նորից, հերթական անգամ հառնեցին «մոռացված ընտրությունների սվերները» («Սոսկովսկիե նովոստի» շաբաթաթերթն այդպես է բնութագրել ռուսական երկրամասերից մեկում ստեղծված իրավիճակը): Եվ այսօր Տեր-Պետրոսյանը չի կարող վարվել այնպես վստահ, ինչպես 1990 թ. ՀԱԲ-ի արգելման եւ արտակարգ դրություն մտցնելու ժամանակ, երբ նրա յուրաքանչյուր քայլը հասարակության գերակշիռ մասը համարում էր ճշգրիտ եւ արդարացված: Տեր-Պետրոսյանի քաղաքական կուրսը, մեղմ ասած, չի վայելում հասարակության մեծ մասի աջակցությունը, եւ վստահության էջեր նա չի կարող ակնկալել բոնություններ եւ կասեցումներ իրականացնելիս: Այլեւս արդյունք չի տա նաեւ կաղրային ջարդը:

Այս աննախադեպ իրավիճակում Տեր-Պետրոսյանը դեռեւս քայլեր ունի: Նախագահը կարող է գրել Ազգային ժողովը եւ նշանակել վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ: Այս քայլը նոր լիցքեր կհաղորդի ներքաղաքական լարված իրավիճակին, սակայն դրանք միայն դրական լիցքեր կլինեն:

Բացի այդ, Տեր-Պետրոսյանը պետք է թե միջազգային հանրության, թե հայ ժողովրդի առջեւ հայտարարի, որ Ղարաբաղի հիմնախնդիրը չի կարող լուծել որեւէ դեկավար, այդ թվում եւ ինքը դեմ գնալով ժողովրդի կամքին, հակառակ դեպքում կվտանգվի տարածաշրջանի կայունությունը:

Խորհրդարանական ընտրություններից հետո ընդդիմությունը թերեւս պահանջի նախագահական ընտրություններ: (Բայց սա այլ խոսակցության նյութ է:) Հակառակ դեպքում, նախագահի հրաժարականի պահանջը շարունակելու է հնչել, եւ թերեւս ավելի ու ավելի հաստատորեն:

Հայաստանում քաղաքական համակարգը պետք է փոխվի, իսկ ազգային արժեքային համակարգը որվի պետականության հիմքում, սա է ջրբաժաններից խուսափելու ճանապարհը:

ՆԱՐԵՆ ՄԱՐՏՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ «ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ» ԴԱՍԵՐԸ

Հաղթողն է դասում պարտվածին

Հաղթողներին չեն դասում: Ընդհակառակը հաղթողներն են դասում պարտվածներին: Մեկ տարի առաջ հունվարյան այս օրերին Բուլղարիայում կրկնվեց այն, ինչ դրանից ընդամենը մի քանի ամիս առաջ արդեն տեղի էր ունեցել Հայաստանում: Բազմահազարանոց ցույցեր, խորհրդարանի պատարում, այնուհետեւ գրոհ խորհրդարանի շենքի վրա, ոստիկանություն, հատուկ ուժեր, մահակներ, ջրցան մեքենաներ, տասնյակ վիրավորներ: Միայն արդյունքն էր տարբերվող հակառակ: Հայաստանում իշխանության գլուխ մնացին այն ուժերը, որոնք արտոնել էին ոստիկանության ուժերի օգտագործումը ցուցարարների դեմ, իսկ ցուցարարներից շատերը դատվեցին: Բուլղարիայում ի վերջո կատարվեց ցուցարարների պահանջը, վաղաժամկետ ընտրություններ տեղի ունեցան, ընդդիմությունը կատարյալ հաղթանակ տարավ եւ հիմա բուռն իրադարձություններից մեկ տարի անց, պատրաստվում է պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր արտոնել էին ուժի կիրառումը ժողովրդի նկատմամբ:

Ով եւ երբ վերջնական որոշում կայացրեց կրակել, մահակներով ու ջրով քշել խորհրդարանի մոտ հավաքված մարդկանց: Հայաստանի դեպքում այս հարցն առայժմ պատասխան չունի եւ երեւի թե դեռ երկար ժամանակ անպատասխան, միգուցե ընդհանրապես անհայտ կմնա: Հիշենք, թեկուզ, ներքին գործերի նախկին նախարարի խոստովանությունը, որ պատճառներից առաջ նա բազմաթիվ փաստաթղթեր է ոչնչացրել: Այստեղ որեւէ տարբերություն չկան որեւէ երակացություն անելու համար: Թերեւս միայն հայտնի խնջույքի ժամանակ այդ նույն նախկին նախարարի հայտարարությունը, թե անհրաժեշտության դեպքում մի քանի հարյուր մարդ էլ կարելի էր սպանել, ու մեկ էլ պատասխանության նախարարի խոսքերը՝ առաջին կրակողն է կանգնեցնում: Բուլղարիայում այլ է: Վերջերս պարզվեց, որ պահպանվել են 97 թվականի հունվարյան բուռն օրերին տեղի ունեցած կառավարության նիստերի արձանագրությունները: Հիշեցնենք, թե ինչ պայմաններում էին դրանք տեղի ունենում:

Նոր տարվա եւ Ծննդյան տոներից անմիջապես հետո իրադրությունը մայրաքաղաք Սոֆիայում խիստ լարվեց: Տասնյակ հազարավոր մարդիկ փողոց դուրս եկան, պահանջելով խորհրդարանական նոր ընտրություններ անցկացնել, քանի որ իշխող սոցիալիստներն, իրոք, անդունդի եզրին էին հասցրել երկիրը: Մեկ տարվա ընթացքում ազգային տարադրամը լեւը, արժեզրկվել էր գրեթե 7 անգամ, հացի եւ վառելիքի գինն աներեւակայելի բարձր էր եւ մարդիկ ծանր երկընտրանքի առջեւ էին հայտնվել՝ սննդամթերք գնել ու սովամահ չլինե՞լ, թե՞ վառելիք ձեռք բերել եւ տաքացնել բնակարանը: Կրքերը խորհրդարանի շենքի մոտ թեժանում էին եւ վերջապես հունվարի 10-ին կատարվեց այն, ինչ Երեւանում տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին. ժողովուրդը, հաղթահարելով ոստիկանության դիմադրությունը, մտավ խորհրդարան: Փշրվեցին շենքի ապակիները, որոնք առանձնասենյակներում հրդեհ բռնկվեց, որը, ճիշտ է, հաջողվեց արագորեն մարել: Ինչպես եւ Հայաստանի դեպքում, Բուլղարիայում էլ մինչեւ այժմ չեն պարզել, թե ով էր այս ամենը հրահրողը եւ արդյոք հատուկ ծառայությունների մասն, ինչպես ասում են, խաղը չէ՞ր: Ինչեւէ, պատգամավորներն այդ ուշ ժամին ընդունեցին մի որոշում, որի համաձայն վերջանալի թվացող նիստը, նրանցից ոչ ոք չտուժեց:

Իսկ այդ նույն ժամանակ նախարարների խորհրդում շարունակվում էր կառավարության նիստը սոցիալիստ վարչապետ ժան Վիդենովի գլխավորությամբ: Կարծիքները զարգացող իրադարձությունների վերաբերյալ տարբեր էին: Անցած շաբաթ ցիալիստներն, իրոք, անդունդի եզրին էին հասցրել երկիրը: Մեկ տարվա ընթացքում ազգային տարադրամը լեւը, արժեզրկվել էր գրեթե 7 անգամ, հացի եւ վառելիքի գինն աներեւակայելի բարձր էր եւ մարդիկ ծանր երկընտրանքի առջեւ էին հայտնվել՝ սննդամթերք գնել ու սովամահ չլինե՞լ, թե՞ վառելիք ձեռք բերել եւ տաքացնել բնակարանը: Կրքերը խորհրդարանի շենքի մոտ թեժանում էին եւ վերջապես հունվարի 10-ին կատարվեց այն, ինչ Երեւանում տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին. ժողովուրդը, հաղթահարելով ոստիկանության դիմադրությունը, մտավ խորհրդարան: Փշրվեցին շենքի ապակիները, որոնք առանձնասենյակներում հրդեհ բռնկվեց, որը, ճիշտ է, հաջողվեց արագորեն մարել: Ինչպես եւ Հայաստանի դեպքում, Բուլղարիայում էլ մինչեւ այժմ չեն պարզել, թե ով էր այս ամենը հրահրողը եւ արդյոք հատուկ ծառայությունների մասն, ինչպես ասում են, խաղը չէ՞ր: Ինչեւէ, պատգամավորներն այդ ուշ ժամին ընդունեցին մի որոշում, որի համաձայն վերջանալի թվացող նիստը, նրանցից ոչ ոք չտուժեց:

Իսկ այդ նույն ժամանակ նախարարների խորհրդում շարունակվում էր կառավարության նիստը սոցիալիստ վարչապետ ժան Վիդենովի գլխավորությամբ: Կարծիքները զարգացող իրադարձությունների վերաբերյալ տարբեր էին: Անցած շաբաթ հրադադարակված արձանագրությունները վկայում են, որ, օրինակ, գյուղատնտեսության եւ առեւտրի նախարարները արդարացի էին համարում ժողովրդական բողոքի ալիքը, քանի որ, խոստովանում էին նրանք, նման վիճակի հասցված ժողովուրդն այլ կերպ չէր էլ կարող գործել: Ընդհանուր տպավորությունն այն է, որ կառավարությունը պարզապես կորցրել էր վերահսկողությունը եւ չգիտեր, թե ինչպես դուրս գալ այս վիճակից: Խորհրդարանում տեղի ունեցած միջադեպն արդեն ավարտվել էր եւ ժողովրդի մեծ մասը ցրվել էր: Այնուամենայնիվ, որոշվեց ուժ կիրառել:

ԲԵՏԵԱ բուլղարական լրատվական գործակալության հրապարակած արձանագրությունները վկայում են, որ այդ օրվա կառավարության նիստում մշակվեց մոտավորապես այսպիսի մի ծրագիր: Ոստիկանության եւ անվտանգության ուժերի օգնությամբ ցրել հանրահավաքները, եթե անհրաժեշտ լինի, կարելի է նաեւ կրակել, անձամբ հրահանգ տվեց վարչապետ Վիդենովը: Քննարկվել է նաեւ բանակն օգտագործելու հարցը: Այնուհետեւ անկախ լրատվամիջոցները պետք է լռեցվեին, կառավարությունը պետք է հանդես գար հատուկ հայտարարությամբ, որ տեղ խորհրդարանի գրոհը պետք է ներկայացվեր որպես հակասահմանադրական պետական հեղաշրջում եւ դատապարտվեին ընդդիմության առաջնորդները: Փաստորեն, կատարվեց ծրագրի մի մասը միայն: Ոստիկանները հարձակվեցին ցուցարարների վրա, բայց գործը չհասավ հրազենին: Այնուամենայնիվ, հիվանդանոց դասվեց մոտ 300 մարդ:

Ինչո՞ւ չհաջողվեց իրականացնել ծրագիրն ամբողջությամբ: Այժմ կարելի է միայն ենթադրություններ անել: Միգուցե պատճառն այն էր, որ Բուլղարիայի նախագահ Ժելյու Ժելեւն էլ էր ներկայացնում ընդդիմությունը: Ճիշտ է, այդ երկրում նախագահի դերը զուտ արարողակարգային է, բայց բոլոր դեպքերում ընդդիմության դեմ միջոցներ կիրառելը կնշանակեր հարվածել նաեւ նախագահին: Միգուցե դեր խաղաց նաեւ միջազգային հանրության կարծիքը, որը միանշանակ դեմ էր երկիրն աննախադեպ ճգնաժամի հասցրած սոցիալիստներին, այսինքն նախկին կոմունիստներին:

Ինչեւէ, ընդդիմությունն ի վերջո հասավ իր նպատակին, ադրիլին Բուլղարիայում վաղաժամկետ ընտրություններ տեղի ունեցան: Սոցիալիստները դարձան ընդդիմադիր եւ, ի դեպ, մինչեւ այժմ

ԱԶԳ

Մշակույթ

Նշանակալի իրադարձություն ավարտվեց

Վեց օր մեր մայրաքաղաքի մշակութային գլխավոր իրադարձությունը Հայաստանում անցկացվող բրիտանական շաբաթն էր: Երեւանի մշակութային օջախներում, ուսումնական հաստատություններում, պետական հիմնարկներում եւ այլուր անցկացված բազմաբնույթ միջոցառումները, որոնք հնարավորություն ընձեռեցին ավելացնելու մեր գիտելիքները Մեծ Բրիտանիայի եւ նրա ավանդույթների մասին, էլ ավելի նպաստեցին Մեծ Բրիտանիայի եւ Հայաստանի միջեւ արդեն առկա բազմաթիվ կապերին եւ համագործակցության ամրապնդմանը:

Բրիտանական շաբաթի անցկացումը հնարավոր դարձավ առանձին անհատների եւ կազմակերպությունների աջակցության շնորհիվ:

Թերթի նախորդ համարներում մենք մեկ առ մեկ անդրադարձել ենք շաբաթի յուրաքանչյուր օրվա իրադարձություններին: Շաբաթի եզրափակիչ օրը՝ հունվարի 24-ը, եւս հագեցած էր մի շարք իրադարձություններով: Այդ օրը պատանի հանդիսատեսի պետական թատրոնում երաժշտական ներկայացմամբ հանդես եկան Վիլյամ Սարոյանի անվան անգլիական թատրոն-ստուդիայի դերասանները:

Շաբաթի ծրագրի ուշագրավ իրադարձություններից մեկն էլ տեղի ունեցավ Ազգային օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի հայելադաս սրահում: Այստեղ բրիտանական ավանդական երաժշտության կատարմամբ հանդես եկավ հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը:

Բրիտանական շաբաթի ընթացքում Հայաստանի կինոյի տանը ցուցադրվեց վեց գեղարվեստական կինոնկար: Վերջին օրը հանդիսականները դիտեցին «Վոլեսը եւ Գրոմիտը» բրիտանական գեղարվեստական կինոնկարը:

Հունվարի 24-ին «Զվարթնոց» օդանավակայանից BA/BMed ինքնաթիռը ուղղություն վերցրեց դեպի Լոնդոն: Այն Անգլիայի մայրաքաղաք հասցրեց բրիտանական շաբաթի մասնակիցներին:

ՆՈՒՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ

Եթե...

Հայաստանում բրիտանական շաբաթի շրջանակներում Վ. Սարոյանի անվան անգլիական թատրոն-ստուդիան պատանի հանդիսատեսի պետական թատրոնում ներկայացրեց «Եթե» պոետիկ-երաժշտական ներկայացումը, որի ընթացքում հնչեցին հին ու նոր անգլիական պոեզիա (ինարերգություն, հումոր) եւ արձակ անգլիական երաժշտության ուղեկցությամբ: Այս թատրոնը ստեղծվել է 1994 թ.: Սակայն հիմնական բեմ չունենալու պատճառով ելույթներ է ունեցել տարբեր բեմերում (ամերիկյան համալսարանում ներկայացրել են «Մաուգլի» ներկայացումը): Հասկանալի է, որ յուրաքանչյուր ներկայացման համար միջոցներ են հարկավոր, որը թատրոնը չունի, այդ իսկ պատճառով ավելի շատ հարմարվում է պայմաններին (օրինակ, ոչ թե նոր հագուստ է ստեղծում, այլ ստիպված եղածով բավարարվում): «Եթե» ներկայացումը Հայաստանում Բրիտանիայի դեսպանատան հովանավորությամբ է իրականացվել: Թատրոնի դերասանների մեծ մասը Շիրակացու անվան համալսարանի սաներն են, այսինքն այս թատրոնը նաեւ ուսանողական թատրոն է, որը, ցավոք, Հայաստանում հազվադեպ երեւույթ է:

Ներկայացումները անգլերենով են, հետեւաբար հանդիսատեսի նեղ շրջանակ ունեն: Այն հարցին, թե ինչո՞ւ հենց անգլիական թատրոն, թատրոնի ռեժիսոր Արսեն Աբրահամյանն ասաց, որ ներկայացվում են անգլիացի հեղինակների գործերը, որը հնարավորություն կտա ավելի լավ ծանոթանալու անգլիական գրականությանը, բացի այդ հյուրախաղերի դեպքում լեզվական պատնեշը կվերանա եւ այլն:

Հայաստանում արդեն անգլերեն իմացողների խավ գոյություն ունի, որը եւ կհաճախի այս թատրոնը: Քանի որ Հայաստանում որոշ չափով բարձր ափսեավարձով ափսեանոց գտնելու համար անգլերենի իմացությունը պարտադիր է, ապա բնական է նաեւ անգլիական թատրոնի գոյությունը:

Ա. Ա.

Բրիտանական շաբաթ

Նաեւ այսպիսի մտորումներ Բրիտանիայի մասին



Օպերայի եւ բալետի հայելադաս դահլիճում երաժշտասերների ծափերի ներքո փակվեց Բրիտանական մշակույթի շաբաթվա վարագույրը: Հավանաբար բրիտանացիների աչքերում մենք ջունգլիներում ապրող պապուասներ ենք, որոնց դեռ պետք է սովորեցնել խոսաբլուրներ մշակել, կարմիր լույսի տակ անցնել փողոցը, եւ ի թիվս այլոց որոշակի, գոնե մոտավոր պատկերացում տալ Բրիտանիայի եւ նրա մշակույթի մասին: Ուստի պատահական չեն հայկական մամուլում բնավ ոչ հիացական արտահայտությունները կազմակերպած միջոցառումների մասին (խոսքը վերաբերում է հենց բրիտանացիների մտահոգություններին): Եվ նույնիսկ ոչ պատահական է բրիտանացիների զարմանքը՝ «որտեղի՞ց դուք գիտեք այս երգերը»:

Բայց դառնանք բրիտանական միջնադարյան երաժշտությանը, որը շատ ավելի վաղ է ծեւավորվել եւ ավելի մեծ բարձունքների է հասել, քան նույն ժամանակվա երաժշտական արվեստը Ֆրանսիայում, Գերմանիայում: Ընդ որում, թագավորական տան անդամները ոչ միայն եղել են երաժշտական արվեստի հովանավորներ, այլեւ ծեւավորել են երաժշտական ճաշակ թե՛ իբրեւ ստեղծագործողներ եւ թե՛ իբրեւ կատարողներ: Մեզ են հասել, օրինակ, Հենրի Ութերորդի մադրիգալները: Ելիզավետա եւ Եկատերինա Արագոնացի թագուհիները եղել են փայլուն կատարողներ: Ժամանակը եւ ճակատագիրն ինքը Լյուտեն ափսեել են հոգուս Անգլիայի: Շեքսպիրի, Մորլիի եւ Դաուլենդի համագործակցությունից ծնվել են հիանալի մադրիգալներ («Հոգ չէ կանայք»): Իսկ Fitzwilliam անունով կապուտաչյա բրիտանացին հավաքել է գոյություն ունեցող նոտագրությունները, կազմել երկհատորանի անթոլոգիա եւ կորստից փրկել միջնադարյան նվագների զգալի մասը: Ներկայումս գիրքը պահվում է Բրիտանական ազգային գրադարանում: Ցավոք, այս փաստը ոչ մի կերպ չի թեթեւացնում հայ երաժիշտների գործը, որոնք լավագույն դեպքում իրենց ձեռքի տակ ունեն դաշնամուրային նվագակցությունը: Այսպես օրինակ, համերգին հնչած «Դիդոնա եւ Էնեաս» օպերայի հատվածներին վերջնական երաժշտական ձեւավորում տալու համար պահանջվել է երվանդ Երկանյանի ծավալուն, կարելի է ասել, հեսագոտական աշխատանքը: Փաստորեն, ինտուիտիվ կերպով վերականգնվել են բոլոր գործիքների պարտիաները: Նույնը պահանջվել է մնացած բոլոր ստեղծագործությունների համար:

Պետք է ասել, որ «Տաղարան» համույթը Սեդրակ Երկանյանի գլխավորությամբ պատվով է իրագործում տարբեր բարդության երաժշտական խնդիրները: Եվ դեռ համարձակվում է ավելին ցանկանալ եւ երազել: Օրինակ, երազում է բեմադրել Պյուրսելի «Դիդոնա եւ Էնեաս» օպերան կամերային երաժշտության տան դահլիճում: Օպերան առաջին անգամ Անգլիայում բեմադրվել է սիրողական ուժերով՝ օրիորդաց վարժարանի սանուհիների մասնակցությամբ: Գոյություն ունեն օպերայի մի քանի խմբագրումներ, այդ թվում՝ Բրիտենի եւ Ե. Երկանյանի խմբագրումները:

Իսկ «Տաղարան»-ի հիշյալ համերգը նրա տաղանդավոր ղեկավար Սեդրակ Երկանյանի ստեղծագործական նոր նվաճման արգասիք էր: Իրենց փայլուն կատարմամբ աչքի ընկան նաեւ համույթի բոլոր անդամները:

Սակայն վերադառնանք անգլիացիներին:

Ինչ խոսք, մենք շատ ենք սիրում Անգլիան, գուցե մի քիչ այլ սիրով, քան, օրինակ, Ֆրանսիան: Եվ եթե ասում եմ «այլ», դեռ չի նշանակում՝ պակաս, ուղղակի տարբեր այնքանով, որքանով հենց ինքը՝ Անգլիան տարբերվում է Ֆրանսիայից: Եվ գուցե անգլիացիների մասին այնպիսի բաներ կարող ենք ասել, որ իրենք էլ չգիտեն:

«Ես մի քանի անգամ եմ եղել Անգլիայում, ասում է Սեդրակ Երկանյանը, եւ ինձ համար անգլիացիները բոլորովին էլ սառը ազգ չեն: Բացառիկ կազմակերպված, ամեն ինչի արժեքն իմացող՝ թե ժամանակի, թե իրենց, թե եղածի-չեղածի, մինչեւ անգամ ընկած բոքի: Ամեն ինչի տերն են, ամեն ինչ վայելում են: Իրենց այդ «սառնությունը» միգուցե պետք է բարգմանել իբրեւ արժանապատվություն»:

Ի. ՍԱՐՈՅԱՆ

Անգլիական պիեսը հայ մանուկների կատարմամբ

Բրիտանական շաբաթվա մշակութային միջոցառումների շարքում էր «Ջյունե թագուհին» ներկայացումը, որը Հ. Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի թատրոնում ներկայացրին «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության (ՀԿ) շարժական թատրոնի երեխաները: Թատերախումբը, ուր հանդես են գալիս հաշմանդամ երեխաները, սկսել է գործել 1996-ից: Օքսֆամ եւ «Հույսի կամուրջ» ՀԿ-ների, ՀՀ-ում Բրիտանիայի դեսպանատան հանձնարարակցությունը լիարժեք կյանքի է վերադարձնում այս երեխաներին, օգնում նրանց սերտաճել հասարակությանը: 1997 թ. ամռանը Հայաստանում կայացած հաշմանդամների փառատոների ժամանակ մանկական թատերախումբը արժանացավ Գլխավոր մրցանակի: 97-ի հոկտեմբերին նրանք հրավեր ստացան Թբիլիսիում անցկացվող «Նվեր» արվեստի միջազգային փառատոնին մասնակցելու: Այդ ժամանակ նրանց խաղին հետեւած հանրահայտ բրիտանացի դերասանուհի Վանեսա Ռեդգրեյվը մեծ տպավորություն էր ստացել փոքրերի զգայուն խաղից:

«Ջյունե թագուհին», որի բեմադրող ռեժիսորն էր Հասմիկ Խաչերյանը, հուզեց նաեւ մեր փոքրիկ հանդիսատեսին: Առանձին անուններ նշելու կարիք չկա: Բոլոր երեխաները նվիրումով էին կատարում իրենց դերերը: Ինչպես բեմադրության եզրափակիչ խոսքում հնչեց սերն է, որ փրկում է մեր հոգիները:

Հատկանշական է, որ շաբաթվա մշակութային բոլոր միջոցառումներն իր ներկայությամբ պատվում էր ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան տրն Միտչինը, որը մեծատես խոսում է նրա խնամոս վերաբերմունքի մասին:

Ա. Ա.

Եվս ինչով նշանակալի դարձավ բրիտանական շաբաթը

Անկեղծ ասած, երբ իմացա, որ Հայաստանում Մեծ Բրիտանիայի շաբաթ է անցկացվելու, ուրախացա: Մեծ սպասելիքներ ունեի: Սակայն, որքան էլ որ մամուլը եւ հեռուստատեսությունը գովերգեցին այդ շաբաթվա շրջանակներում կատարված միջոցառումները, նրանք, ովքեր եղան այդ միջոցառումներին, մեկ անգամ եւս զգացին Բրիտանիայի արհամարհական վերաբերմունքը մեր նկատմամբ: Որքան էլ Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջոն Միտչինը մեզ համոզում էր, թե այս շաբաթը կնպաստի Անգլիայի մասին մեր իմացության խորացմանը, տեսանք, որ նա ճիշտ կլիներ հակառակն ասելու դեպքում: Հայկական կողմը, ի տարբերություն անգլիականի, պատշաճ մակարդակով, լուրջ եւ արհեստավարժ կերպով էր պատրաստվել, եւ որքան հասկացա, մենք անգլիացիներից ավելի «լավ» գիտենք Անգլիան:

Նման շաբաթ կազմակերպելով եւ հայկական, եւ բրիտանական կողմերը բավականաչափ ծիծաղաշարժ վիճակի մեջ ընկան: Հայկական կողմը ցանկացավ հաճոյանալ անգլիացիներին իր լավ նախաձեռնություններով, անգլիական կողմը փայլեց իր արհամարհանքով: Այո, Հայաստանը «հետամնաց» երկիր է, որը, սակայն, պատճառ չէ, որպեսզի մեզ վերեւից նայեն: Ոչ ոք, որքան էլ կամենա, իրավունք չունի հայերին տարբերություն անգլիականի, պատշաճ մակարդակով, լուրջ եւ արհեստավարժ կերպով էր պատրաստվել, եւ որքան հասկացա, մենք անգլիացիներից ավելի «լավ» գիտենք Անգլիան:

Նման շաբաթ կազմակերպելով եւ հայկական, եւ բրիտանական կողմերը բավականաչափ ծիծաղաշարժ վիճակի մեջ ընկան: Հայկական կողմը ցանկացավ հաճոյանալ անգլիացիներին իր լավ նախաձեռնություններով, անգլիական կողմը փայլեց իր արհամարհանքով: Այո, Հայաստանը «հետամնաց» երկիր է, որը, սակայն, պատճառ չէ, որպեսզի մեզ վերեւից նայեն: Ոչ ոք, որքան էլ կամենա, իրավունք չունի հայերին վերեւից նայելու, մանավանդ մշակույթի ասպարեզում: Հակառակ դեպքում ինքը կհայտնվի ծիծաղելի վիճակի մեջ:

Ի վերջո, Բրիտանիան բրիտանացիները պետք է ներկայացնեին, ոչ թե մենք: Մենք շաբաթվա ընթացքում մեր ներկայացրած միջոցառումները կարող էինք այդ շաբաթվա շրջանակներից դուրս էլ կազմակերպել: Ինչը եւ անում ենք:

Եթե մենք բրիտանացիների առջեւ գլուխ չխոնարհեինք, այլ նրանց նայեինք ինչպես հավասարը հավասարի, ապա նրանք իրենք (ընդ որում պատշաճ ձեւով) կներկայացնեին իրենց մշակույթը:

Ա. Ա.

ԱՄՆ

Մի ընդօրինակեք նրանց

Լոսանջելեսյան հայտնի դիզայներ միսթեր Բլեքվելը 38 տարի շարունակ հրաժարակում է անողոք մի ցուցակ, որը մատնանշում է այդ տարվա աշխարհի ամենաանճաշակ կանանց: Առաջին տեղը միանգամայն բնականորեն զբաղեցնում է «Թոի-վոի» Spice Girls խմբակը: Պրն Բլեքվելը նրանց համարում է երկրագնդի վրայի միակ անհամ համեմունքը: Երկրորդ տեղում «Էլեն» կատակերգական սերիալի աստղ Էլեն դը Ջեներեսն է, որն անցած տարի գլխավորում էր ցուցակը: Ցուցակի հեղինակն առավել քան անդրդվելի է. «Էլենի ողջ զգեստապահարանը փոփոխության կարիք ունի».

Երրորդ հորիզոնականը բաժին է ընկել Մադոննային, որին առաջին տարին չէ վերադահվում այդ «պատիվը»: Այս տարի գեղագեցիկ ուշադրությանը նա արժանացել է իր վերջին՝ «Էվիտա» ֆիլմի դարաշրջանի հագուստներով չափազանց հրապուրվելու համար: Պամելա Անդերսոնին փառավորապես չորրորդ տեղում հայտնվելուց չփրկեց անգամ երկրորդ որդու ծնունդը: Իր հագուստներով «սիլիկոնե» տիկինը խստահայաց Բլեքվիլի վրա թողել է փամփուշտներ որոնող ոսգմատենչ Վեներայի տպավորություն:

Առաջին տասնյակի մնացյալ տեղերը զբաղեցնում են Ջենիֆեր Թիլին, Սիգուրնի Ուիվերը («մումիա»), Էմմա Թոմփսընը, Ալիսիա Սիլվերստոունը, Ֆրենսիս Ֆիլերը: Իսկ 10-րդ տեղում, որքան էլ զարմանալի է, պրն Բլեքվիլը (որի ցուցակը չի խնայել անգամ Անգլիայի թագուհուն) հաճույքով հաստատել է տղամարդու էքստրեմիստ-ոսկեր Մերիլին Մենսոնին: Գաղտնի շղարշով պատված գեղագեցը (նրա անունը մինչ օրս ոչ ոքի հայտնի չէ) եզրահանգման մեջ նշում է, որ ներկայումս վերադարձել են դարակեսի նորաձեւության հովերը, եւ իր «առանձնաշնորհյալները» դարձել են նրանք, ովքեր անկարող են զուգորդել 30-ականների կանոնները այսօրվա հետ:

Չուզենալով շատ դաժան գտնվել, դիզայները թվարկել է նաեւ բարձրաճաշակ կանանց անունները, որոնք են Կորին Լավը, Ջադա Փինքեթը, Դեմի Մուրը, Նիկոլ Քիդմանը, Սելմա Հայեկը, Էնն Հեյելը, Ռոսմա Դաուհին, Թոնի Բեկստոնը, Լիզա Մարի Քրին եւ անհայտ «թխամորթ ծիուկ» Սերենա Լինլին:

Ա. Ա.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԵՐԵՎԱՆ

ՀԱՕԿ-ի գլխավոր համաժողովը

Տեղի ունեցավ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գլխավոր համաժողովը:

Սկզբում ՀԱՕԿ-ի մի շարք անդամներ պարգևատրվեցին դիպլոմներով, նվերներով:

1997 թ. լավագույն մարզիկ Արա Գևորգյանն ու նրա մարզիչը՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Ռազմիկ Գոլեցյանը, արժանացան դրամական պարգևի:

1997 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետությամբ հանդես եկավ ՀԱՕԿ-ի նախագահ Ալեքսան Ավետիսյանը: Մեկ տարվա գործունեությունը ներկայացվեց երկու բաժիններով՝ մարզական-կազմակերպչական եւ ֆինանսատնտեսական: Զեկուցողը նշեց, որ ՀԱՕԿ-ին անդամակցում է 170 մարդ, որոնցից 93-ը օլիմպիական մարզաձևերի ֆեդերացիաների, 5-ը ոչ օլիմպիական ֆեդերացիաների եւ 72-ը այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ են: ՀԱՕԿ-ի կոլեկտիվ անդամ են օլիմպիական 35 մարզաձևերի ֆեդերացիաներից 21 ազգային ֆեդերացիաներ, ՄՕԿ-ի կողմից ճանաչված 23 ոչ օլիմպիական ֆեդերացիաներից անդամ է 4 ազգային ֆեդերացիա եւ 18 այլ կազմակերպություններ՝ ընդհանուր առմամբ 44 կազմակերպություններ:

1997 թ. ընթացքում ՀԱՕԿ-ի մարզական պատվիրակությունները մասնակցել են Շվեդիայում եւ Պորտուգալիայում կայացած Եվրոպայի երիտասարդության ձմեռային եւ ամառային օլիմպիական օրերին: Շվեդիայում մեր 9 մարզիկները մասնակցել են գեղասահքի, դահուկային ու լեռնադահուկային սպորտի մրցումներին, Պորտուգալիայում 14 մարզիկներ՝ հեծանվային սպորտի, թեքեւ աշտեիկայի եւ ձյուդոյի մրցումներին:

Հունիսի 23-ին միջազգային օլիմպիական օրվա ընթացքում անցկացվել է փոխանցումավազք բուհերի միջեւ, կազմակերպվել են ցուցադրական ելույթներ տարբեր մարզաձեւերից: Անցկացվել են նաեւ մրցումներ սպորտի վետերանների, հաշմանդամների միջեւ:

1997-ին անցկացվել է ՀԱՕԿ-ի գործադիր կոմիտեի 5 նիստ, որոնցում քննարկվել է 45 հարց:

Հաշվետու տարվա ընթացքում ՀԱՕԿ-ի պատվիրակությունները մասնակցել են միջազգային մակարդակի այնպիսի միջոցառումների, ինչպիսիք են Հռոմի իրավաբանական սեմինարը, Եվրոպայի ազգային օլիմպիական կոմիտեների քարտուղարների եւ ԵՖ միսիաների հանդիպումը (Ավստրիա), Եվրոպայի օլիմպիական կոմիտեի գլխավոր խորհրդաժողովը (Շվեդիա), Նագանոյի օլիմպիական խաղերի կազմկոմիտեի խորհրդակցությունը (Ճապոնիա):

Հայաստանի օլիմպիական ակադեմիայի աշխատանքներն առավել բարձր հիմքերի վրա դնելու նպատակով գործադիր կոմիտեի որոշմամբ այդ աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը դրվեց ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի վրա: Տնօրեն նշանակվեց ինստիտուտի ռեկտոր Ռոբերտ Գալստյանը:

ՀԱՕԿ-ը ֆիզկուլտուրայի ինստիտուտի հետ համատեղ ծաղկաձորում անցկացրել է սեմինար-խորհրդակցություն «Օլիմպիական գաղափարները բոլորին» թեմայով: Անցկացվել է նաեւ «Արգելված դեղամիջոցների օգտագործման վնասակար հետեւանքների մասին» թեմայով սեմինար-խորհրդակցություն: ՄՕԿ-ի լրավճար ստացող 30 մարզիկներ ենթարկվել են դոպինգ ստուգման:

ՀԱՕԿ-ը ակտիվորեն մասնակցել է համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի 1-ին նստաշրջանի կազմակերպման եւ անցկացման աշխատանքներին:

Դեկտեմբերի 3-ին ՀԱՕԿ-ի ղեկավարությունն ընդունեց Եվրախորհրդի սպորտի զարգացման կոմիտեի պատվիրակությանը:

Պարբերական բնույթ են կրում ՄՕԿ-ի եւ ԵՕԿ-ի պատասխանատու աշխատողների հետ հանդիպումները: 1997-ի մարտին ՄՕԿ-ի նախագահ Սամարանչի հետ անձնական հանդիպում կայացավ Լոզանում՝ ՄՕԿ-ի շտաբ-բնակարանում:

Ներկայացնելով հաշվետու տարում ՀԱՕԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության հիմնական ուղղությունները՝ պրն Ալեքսան Ավետիսյանը նշեց, որ օգնություն եւ պարգեւատրումներ են հատկացվել մի մեծ խումբ գործող մարզիկների, 20 սպորտի վետերանների: 41 մարզիկների եւ մարզիչների հատկացվել են ՄՕԿ-ի կողմից սահմանված լրավճարներ, պետական բուհերի 3 ուսանողների հատկացվել է Հրանտ Շահինյանի անվան կրթաթոշակ:

ՀԱՕԿ-ը մի քանի ֆեդերացիաների ֆինանսական օգնություն է ցույց տվել, մուծվել են մի շարք ազգային ֆեդերացիաների անդամավճարները:

Խոսելով ազգային օլիմպիական կոմիտեի առաջիկա ծրագրերի ու անելիքների մասին՝ ՀԱՕԿ-ի նախագահը նախ շեշտեց, որ պետք է ամեն ջանք գործադրել առաջիկա ձմեռային օլիմպիական խաղերում երկրի մարզական պատիվը պատշաճ բարձրության վրա պահելու համար:

Պրն Ավետիսյանը կարեւորեց հունիս ամսին Մոսկվայում կայանալիք Համաշխարհային պատանեական խաղերին Հայաստանի մասնակցությունը: Առաջին անգամ անցկացվող այդ կարեւոր սուգաստեսին, որտեղ հանդես կգան աշխարհի 140 երկրների ներկայացուցիչներ, պետք է այսօրվանից նախապատրաստվել:

ՀԱՕԿ-ի նախագահը նպատակահարմար գտավ պայմանագրերի կնքումը ֆեդերացիաների հետ, ինչը էլ ավելի կբարելավի աշխատանքները: Նա այս տարվա առաջնահերթ խնդիրներից համարեց օլիմպիական բանգարանի ստեղծումը:

Ալեքսան Ավետիսյանը նշեց, որ շատ անելիքներ կան նաեւ տնտեսական գործունեության բնագավառում, եւ ժամանակն է, որ ՀԱՕԿ-ը ստեղծի իր ֆինանսական բազան: Կարեւոր է մարզագույք արտադրող ֆիրմաների հետ համագործակցությունը, նրանց հետ պայմանագրերը:

Ալեքսան Ավետիսյանը առանձնացրեց շախմատի, թեքեւ աշտեիկայի, սեղանի թենիսի, բադմինտոնի, բոցմամարտի, լեռնադահուկային, հեծանվային սպորտի, բասկետբոլի, սուսերամարտի ֆեդերացիաներին, որոնք կարողանում են լավագույն ձեւով կազմակերպել աշխատանքները միջազգային ֆեդերացիաների հետ:

Պրն Ավետիսյանը նշեց, որ նույնիսկ այն մարզաձեւերում, որոնց առանձնահատուկ ուշադրություն են հատկացնում ՀՀ սպորտվարչությունն ու ՀԱՕԿ-ը, անցած տարի ոչ բավարար արդյունքներ են ցույց տվել: Իսկ հաշվի առնելով, որ 2000 թ. Սիդնեյում անցկացվելիք օլիմպիական խաղերին այնքան էլ շատ ժամանակ չի մնում, պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկել: Անհրաժեշտ է մշակել զարգացման հեռանկարային ծրագիր, որը մասնագիտական խոր վերլուծություններ ու համապատասխան հանձնարարականների հիման վրա կարացուցի ՀԱՕԿ-ի, Մշակույթի, երիտասարդության հարցերի ու սպորտի նախարարության, մարզական ընկերությունների եւ ֆեդերացիաների համատեղ ջանքերը՝ ընդհանուր գործի հաջողությունն ապահովելու համար:

ՀԱՕԿ-ի նոր խորհրդանիշի ընդունման եւ ՀԱՕԿ-ի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին զեկուցեց ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանը: Համաժողովը միաձայն հաստատեց նոր դրոշը, դիպլոմը, վկայագիրը: Ըստ այդմ փոփոխություն կկատարվի կանոնադրության 21-րդ հոդվածի 2-րդ կետում:

Հաջորդ հարցերը վերաբերում էին ՀԱՕԿ-ի կազմում փոփոխություն կատարելու եւ ՀԱՕԿ-ի գործադիր կոմիտեի նոր անդամի ընտրությանը: ՀԱՕԿ-ի մի քանի անդամների, որոնք, կանոնադրության համաձայն, իրենց տարիքի պատճառով դուրս են մնացել ՀԱՕԿ-ի կազմից, քվեարկությամբ ընտրվեցին պատվավոր անդամ: Դեկտեմբերին կայացած գործադիր կոմիտեի նիստում գործկոմի անդամ էր դարձել օլիմպիական չեմպիոն, հրաձգության ֆեդերացիայի նախագահ Հրայր Պետիկյանը: Համաժողովի անդամները հաստատեցին այդ որոշումը:

Նագանոյի 18-րդ ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցող մարզիկների նախապատրաստման մասին զեկուցեց «Նագանո-98» շտաբի պետ Արթուր Գեւորգյանը: Նա ասաց, որ նախապատրաստությունն անցել է երկու փուլով: Այդ ընթացքում կոորդինացիոն շտաբը ձմեռային մարզաձեւերի ֆեդերացիաների հետ զգալի գործ է կատարել, որի արդյունքում հանրապետության յոթ մարզիկներ իրավունք են ձեռք բերել մասնակցելու օլիմպիադային: Հայաստանի պատվիրակությունը պատրաստվում է փետրվարի 3-ին մեկնել Նագանո:

Շատ ախույժ անցան ելույթները, մտքերի փոխանակությունը:

Ֆիզկուլտուրայի ինստիտուտի ռեկտոր, օլիմպիական ակադեմիայի տնօրեն Ռոբերտ Գալստյանը խոսեց օլիմպիական գաղափարները տարածելու մասին: Նա խոր մտահոգություն հայտնեց առաջատար մարզիկների՝ հանրապետությունից հեռանալու առնչությամբ: Պրն Գալստյանն ասաց, որ մեր մարզիկներին պահելու համար պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծել:

Մարզիկների, նաեւ սպորտը թողած մարզիկների նկատմամբ հոգատարություն ցուցաբերելու մասին խոսեց բոցմամարտի աշխարհի չեմպիոն Նշան Մունչյանը:

Ընդհանրապես, բոցմամարտիկները ցույց տվեցին, որ իրենք ակտիվ են ոչ միայն ոինգում: Բոլորին մտահոգող հարցերի մասին խոսեցին ֆեդերացիայի ղեկավարներ Վազգեն Բաղալյանը, Դերենիկ Գաբրիելյանը, աշխարհի չեմպիոն Իսրայել Հակոբյանը: Վերջինս նշեց, որ ՀԱՕԿ-ն ու սպորտվարչությունը պետք է մտահոգվեն ազատագրկման մեջ գտնվող ճանաչված ըմբիշ Բենուր Փաշայանի հարցով:

Մարզընկերություններ, մարզադարձների, նրանց կառուցվածքի ու կարգավիճակի հարցերն էին առաջին հերթին հուզում Շիրակի մարզի սպորտբաժնի վարիչ Վարդեւան Գրիգորյանին, «Սեւան» ընկերության նախագահ Ռոբերտ Տիգրանյանին:

Շահագրգիռ խոսակցությունը հարթ չէր ընթանում, եղան կարծիքների բախումներ, շիկացումներ: Եվ դա հասկանալի է. բոլորը մտահոգված են մեր սպորտի այսօրվա ու վաղվա վիճակով:

Ինչպես արդարացիորեն նշեց սպորտվարչության պատասխանատու աշխատող Ստեփան Բիշարյանը, «Բոլորս մի ընդհանուր գործ ենք անում»: Նրան լրացրեց ՀԱՕԿ-ի գործկոմի անդամ, Աժ պատգամավոր Գագիկ Ներսիսյանը մասնավորապես ասաց. «Բոլորս կոչված ենք աշխատելու, օգտակար լինելու»:

Վերջում համաժողովն ընդունեց որոշում, որով ՀԱՕԿ-ի գործադիր կոմիտեին հանձնարարվեց գործնական միջոցառումներ ձեռնարկել այս տարի կայանալիք Համաշխարհային պատանեական խաղերին եւ 2000 թ. Սիդնեյում կայանալիք օլիմպիական խաղերին լավագույն ձեւով նախապատրաստվելու եւ մասնակցելու համար: Գործադիր կոմիտեի նիստերում պարբերաբար պետք է լսվեն օլիմպիական մարզաձեւերի ազգային ֆեդերացիաների տեղեկությունները հանրապետությունում մարզաձեւերի զարգացման, բարձրակարգ մարզիկների պատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ: Որոշվեց նաեւ քայլեր ձեռնարկել ՀԱՕԿ-ի նյութատեխնիկական բազայի ամրապնդման եւ հովանավորներ գտնելու ուղղությամբ: ՀԱՕԿ-ի բոլոր անդամներին հանձնարարվեց ամենօրյա ակտիվ օգնություն եւ աջակցություն ցուցաբերել ՀԱՕԿ-ի քարտուղարությանը կանոնադրական պահանջների եւ խնդիրների կատարման ուղղությամբ:

Որոշվեց նաեւ դիմել հանրապետության ղեկավարությանը՝ Բենուր Փաշայանի գործը վերանայելու հարցով:

ՖՈՒՏԲՈԼ

Գավաթի 6-րդ խաղարկությունը

Մոսկվայում անցկացվում է Համագործակցության երկրների չեմպիոնների գավաթի 6-րդ խաղարկությունը: Հիշեցնենք, որ նախորդ 5 խաղարկություններում երեք անգամ հաղթել են Մոսկվայի «Սպարտակի», երկու անգամ Կիեւի «Դինամոյի» ֆուտբոլիստները: Այժմ էլ այս երկու թիմերը, որոնք հաջող են հանդես գալիս ոչ միայն իրենց երկրների, այլեւ միջազգային մրցումներում, հաղթողի կոչման հիմնական հավակնորդներն են:

Դա ապացուցում են նաեւ նրանց անցկացրած խաղերը: Երկու տուրերում էլ այս թիմերը հաղթանակներ են տարել ու ապահովել 1/4 փուլին իրենց մասնակցությունը: Ընդ որում, «Սպարտակը», որը հանդես է գալիս առաջին խմբում, վերջին խաղում 19-0 հաշվով (նմանատիպ մրցումների ռեկորդ) հաղթեց Տաջիկստանի Կուրգան Տյուբեի «Վախշ» թիմին: Իսկ կիեւցիները (երրորդ խումբ) 6-0 հաշվով առավելության հասան Գյանջայի «Քյափազի» նկատմամբ:

Երկուական գոլ խփեցին «Դինամոյի» առաջատարներ Շեւչենկոն ու Ռեբրովը:

Հաջորդ փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերել եւս երկու թիմեր Թբիլիսիի «Դինամոն» եւ Ռիգայի «Սկոնտոն», որոնք հանդես են գալիս չորրորդ խմբում: Վրաստանի եւ Լատվիայի չեմպիոնները նույնպես երկուական հաղթանակ են տարել:

Իսկ ինչպե՞ս է հանդես գալիս Հայաստանի չեմպիոն «Երեւանը», որը խաղում է առաջին խմբում: Մեր թիմը մեկնարկային խաղում 6-0 հաշվով հաղթելով «Վախշին», այնուհետեւ երկրորդ տուրում հանդիպեց Բելառուսի չեմպիոն Սինսկի «Դինամոյի» հետ: Սկզբունքային խաղում ավելի ուժեղ գտնվեցին մրցակիցները, որոնք հաղթեցին 2-0 հաշվով: «Երեւանը» գործնականորեն զրկվեց 1/4 եզրափակիչ մտնելու իրավունքից:

Այսօր կանցկացվեն Գավաթի խաղարկության երրորդ տուրի խաղերը: «Երեւանը» կհանդիպի Մոսկվայի «Սպարտակի» հետ:

Հայաստանում կարելի է դիտել Լիբանանի առաջնության խաղերը

Բազմաթիվ են այն ֆուտբոլիստները, որոնք խաղում են Լիբանանի ազգային առաջնությունում եւ ունեն Հայաստանի հաղորդակցություն ապա եւ շատ շատերի համար խիստ հետաքրքրական են «Միջերկրականի մարգարիտի» ֆուտբոլային լուրերը: Լիբանանն ու Հայաստանը միշտ էլ այս հրաշալի խաղի զարգացման համագործակցողներն են եղել մանավանդ 1946-47 թթ. մեծ հայրենադարձությունից ստեղծված իրավիճակում: Եթե այդ տարիներին Բեյրութից Երեւան հայրենադարձված «Բաղդասյան» ակումբի «աստղեր» Բաջայր Փոլադյանը, Հայկ Կարմիրյանը, Հովսեփ Ասատրյանը կարեւոր դեր են խաղացել հայրենի ֆուտբոլի զարգացման գործում, ապա մի քիչ մանրամասն պատերազմից հետո Բաբկեն Սելիմյանի, Վարդան Ղազարյանի, Գեւորգ Կարապետյանի, Գուրգեն Ենգիբարյանի, Աշոտ Բարսեղյանի, Արայիկ Աբրահամյանի, Սամվել Պողոսյանի, Արմեն Սանամյանի եւ այլոց ցուցադրած ֆուտբոլային վարպետությունը բարձր է պահել հայկական ֆուտբոլի պատիվը Լիբանանում, արաբական աշխարհում:

Խաղում են Լիբանանի առաջնության մասնակիցները

Այսօր Լիբանանի ֆուտբոլի առաջնությունը Հայաստանում կարելի է դիտել արբանյակային (sattelite) հեռարձակմամբ «Էյ-Բի-Սի-Այ» (IBCI) եւ «Ֆյուչեր» (Futurs) լիբանանյան հեռուստատեսային-արբանյակային հաղորդումներով: Իսկ Լիբանանի ֆուտբոլի առաջնության երկրորդ շրջանը սկսվել է 10 հունվար 1998-ին: Այն կավարտվի 1998 թվականի մայիսի 24-ին: Ապա տեղի կունենան երկրի գավաթի, «Սուպեր գավաթի» եզրափակիչ մրցումները:

Հայաստանցիների եւ Հայաստանում ապրող լիբանանահայերի համար, որոնք արբանյակային հեռաստանմամբ հետեւում են Լիբանանի ֆուտբոլի առաջնությանը, ներկայացնում ենք մոտակա օրերի ժամանակացույցը, Բեյրութի ժամանակով (2 ժամ տարբերությամբ) ու մարզադաշտը:

31 հունվար 1998 թ., ժ. 14.30

«Բրժ»-«Շաբաբ Սահել», Բուրջ Համուդի մարզադաշտ

«Սայես-Հիմե»-«Սիսաա Սիլի», Բեյրութի հաղթամարտեարանի մարզադաշտ

«Սհդ»-«Սիլի Սայդա», «Սաֆա»-ի մարզադաշտ

1 փետրվար 1998 թ., ժ. 14.30

«Սաֆա»-ՀՄՄ, «Սաֆա»-ի մարզադաշտ

ՀՄԸՄ-«Ռիադա Ադաբ» Բուրջ Համուդի մարզադաշտ

«Թադամոն Սուր»-«Անսար», Սայդայի մարզադաշտ

«Նըժմե»-«Ռասինգ»-Բեյրութի հաղթամարտեարանի մարզադաշտ:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ
Բեյրութ-Երեւան

Բոլոր հայ շախմատիստները աղյուսակի առաջին կեսում

Միջազգային վարպետներ Երեւանցի Կարեն Ասրյանը եւ գյումրեցի Արա Մինասյանը Իսպանիայի Ուբեդա քաղաքում անցկացվող շախմատի խոշոր միջազգային մրցաշարում 6 տուրից հետո վաստակելով 4,5-ական միավոր, գտնվում են առաջատարների խմբում:

Հաջող են հանդես գալիս նաեւ Հայաստանի մյուս պատվիրակները: Բավական է ասել, որ մեր տասը շախմատիստներից ոչ մեկը 50 տոկոսից ցածր արդյունք չունի: Կարեն Մովսիսյանը, Արսեն Եղիազարյանը, Լեւոն Արոնյանը վաստակել են 4-ական, Վիգեն Միրումյանը, Վարուժան Հակոբյանը՝ 3,5-ական, Լիլիա Դանիելյանը, Աշոտ Նադանյանը, Գաբրիել Սարգսյանը՝ 3-ական միավոր:

Մինչեւ մրցաշարի ավարտը մնում է չորս տուր:

Գ. Ս.

Դեհիսի գավաթի համար

Ուգանդա է մեկնել թենիսի Հայաստանի հավաքականը, որն այստեղ կմասնակցի աշխարհի բիմային առաջնության՝ Դեհիսի գավաթի խաղարկության փնջային մրցումներին:

Ինչպես հայտնեցին սպորտվարչության լրատվության բաժնից, այս թիմը մրցումներին կմասնակցի հետեւյալ կազմով՝ Սարգիս Սարգսյան, Գեւորգ Գեւորգյան, Դավիթ Բաբայան, Հայկ Հակոբյան: Հավաքականի գլխավոր մարզիչն է Մարտին Պետրոսյանը: Հունվարի 28-ից փետրվարի 1-ը անցկացվելիք մրցումներին Հայաստանի թիմից բացի կմասնակցեն աֆրիկյան երեք երկրների՝ Ուգանդայի, Բոտսվանայի, Բենինի հավաքականները: Շրջանցիկ մրցակարգով անցկացվելիք մրցումների հաղթողն իրավունք կստանա մասնակցելու Դեհիսի գավաթի խաղարկության հաջորդ փուլին, որտեղ հանդես կգան ուժեղագույնները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐՎԱ ԻՐԱԴԱՐՁ

ԲԱՔՈՒ

Ալիեւը գանգատվում է, Usրոեւը՝ Ելցինի անունից հավաստիացնում

ԲԱՔՈՒ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ՍՍԱՐՔ: Ադրբեջանը հուսով է, որ Ռուսաստանը կակտիվացնի ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված իր ջանքերը: Այդ մասին հայտարարեց Ադրբեջանի նախագահ Ալիեւը, ուրբաթ օրն ընդունելով եգոր Usրոեւի գլխավորած Դաշնության խորհրդի պատվիրակությանը, որը Երեւանից Բաքու էր մեկնել պաշտոնական այցով:

Ղարաբաղյան թեմային մեծ տեղ հատկացվեց Ալիեւի ելույթում: Նախագահը գանգատվեց, որ «1997 թ. արդեն անցել է, իսկ ղարաբաղյան հարցը այդպես էլ լուծված չէ», չնայած ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի համանախագահն է Ռուսաստանը, մշակել է կարգավորման երկփուլ պլան: «Պրոսել այլեւս չի կարելի», ասաց Ալիեւը, աջակցություն հուսալով Դաշնության խորհրդից:

Նախագահը Ռուսաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունները ընդհանուր առմամբ բնութագրեց որպես «լավ եւ նորմալ»: Սակայն, նրա խոսքերով, դրանցում որոշակի բարդություններ են առաջ բերում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Հայաստանին «ապօրինի» զենքի մատակարարումը, կամ Անդրկովկասում ռազմական բազաների պահպանումը:

Եգոր Usրոեւը հաղորդեց Ալիեւին նախագահ Բորիս Ելցինի՝ ղարաբաղյան հակամարտության լուծմանն ուղղված Ռուսաստանի ջանքերի հաստատունության հավաստիացումները: Նա հատուկ նշեց, որ «եւ Ռուսաստանը, եւ ԱՊՀ Միջխորհրդարանային խորհուրդը աներեր հանդես են գալիս պետությունների տարածային ամբողջականության պահպանության օգտին»:

Հայաստանին զենք մատակարարելու կապակցությամբ Usրոեւն ասաց, որ այդ գործով քննություն է գնում եւ մատակարարման նախաձեռնողներն արդեն «իրենց պաշտոններում չեն»: Ինչ վերաբերում է Ռուսաստանի զորակազմի ներկայությանը Հայաստանում եւ Վրաստանում, ապա դրանց գտնվելը այդտեղ թելադրված է «բացառապես հարավային ուղղությամբ Ռուսաստանի սահմանների անվտանգության մտահոգությամբ, եւ դա ոչ մի կերպ ուղղված չէ Ադրբեջանի դեմ»:

Ադրբեջանի խորհրդարանում կայացած մամլո ասուլիսում, պատասխանելով Երեւանում իր արած «Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումը Հայաստանի ներքին գործն է» հայտարարությանն առնչվող հարցին, որ տարածել է հայկական «Սնարք» գործակալությունը, Դաշնային խորհրդի նախագահն ասաց, որ նախօրեին Ալիեւի հետ հանդիպելուց հետո իրավիճակը որոշ չափով պարզվեց: Ընդսմին Usրոեւը նշեց, որ խաղաղության մեջ, եւ հիմնականում խաղաղության հասնելու հարցերում «վայրկյանական որոշումներ չեն լինում»: Ըստ Usրոեւի, եւ Հայաստանում եւ Ադրբեջանում առկա են «ընդդիմադիր ուժեր, որոնք պարզապես չեն ուզում լուծել այդ հիմնախնդիրը: Մինչդեռ եւ Հայաստանում եւ Ադրբեջանում այսօր կան հակամարտության փուլ առ փուլ խաղաղ կարգավորման բոլոր պայմանները», եզրափակեց Ռուսաստանի Դաշնային խորհրդի խոսնակը:

«ՀԱՅԱՍՏԱՆ»

Հունվարին յուրաքանչյուր նպաստառուի հատկացվել է 5000-ական դրամի նպաստ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչությունում շարունակվում է դեկտեմբերի 27-ին «Նպաստներ զոհված եւ 1 կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագրի համար անցկացրած Ազգային տուրքի մարաթոնի արդյունքների ամփոփումը:

Հունվարի 26-ի տվյալներով ՀՀ ԿԲ հիմնադրամի հաշվին արդեն փոխանցված է 153,373,429.4 դրամ (306,746.86 դոլար):

Խոստումների գումարը 24,385,000 դրամ է (48,770.00 դոլար):

Հիմնադրամին այս ծրագրի համար հատկացվել են նաեւ մոտ 14,000,000 դրամի նյութական եւ գեղարվեստական արժեքներ: Նյութական արժեքների իրական գինը կճշտվի եւ կհայտարարվի վաճառքից հետո:

Ինչպես նախապես հայտարարվել էր, հունվար ամսին Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ յուրաքանչյուր երեխայի հատկացվել է 5000-ական դրամի նպաստ: Հաջորդ ամիսներին նպաստների չափը նախկինի պես կլինի 2000-ական դրամ: Նպաստների հետագա հնարավոր ավելացումների մասին նախապես կտեղեկացվի:

Ընդհանուր առմամբ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նպաստառուներին հատկացվել է 41,220,000 դրամ:

Հայաստանի Հանրապետությունում 17,480,000 դրամ,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 23,740,000 դրամ:

Հիմնադրամի գործադիր վարչությունը հայտնում է, որ մասնակցությունը «Նպաստներ զոհված եւ առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագրին շարունակվում է, եւ կոչ է անում կոլեկտիվներին եւ անհատներին մասնակցել մշտական ազգային տուրքի ծեւով՝ երաշխավորել ծրագրի անընդհատությունը:

Փոխանցումները կարող եք կատարել՝

ՀՀ ԿԲ, հաշվի համար 103003 215672, «Հայաստան» համահայկական հիմնադրամ:

Փոխանցման մասին տեղեկացրեք «Հայաստան» հիմնադրամի գործադիր վարչությանը՝ Երեւան 10, Կառ. 3-րդ մասնաշենք, 2-րդ հարկ, հեռ. 56.01.06 մասնակցությունը գրանցելու եւ «Ազգային տուրքի» ամենամյա վավերագիր ստանալու համար:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հրեաները Արաֆաթին չթողեցին այցելել Հոլոկոստի թանգարան

«Նյու Յորք թայմս» թերթի թղթակից Դեյվիդ Սլոանը տեղեկացնում է, որ Նյու Յորքում գտնվող հրեական ողջակիզման (Հոլոկոստ) թանգարանի ղեկավարությունը մերժել է Պաղեստինի ղեկավար Յասեր Արաֆաթին պաշտոնական պետական աստվածավորությունների հատուկ այցի արտոնություն տալ թանգարան: Թղթակցի ասելով, թանգարանի ղեկավարությանը «ճնշել» են որոշ ազդեցիկ ամերիկահրեաներ, որոնց կարծիքով Արաֆաթը «հարուցյալ Հիտլերն է»: Փոխարենը, գրում է Սլոանը, թանգարանի ղեկավարությունն ամերիկյան պետքարտուղարությանը տեղեկացրել է, որ, ինչպես յուրաքանչյուր ոք, Արաֆաթն էլ կարող է տոմս առնել եւ մտնել թանգարան, ինչը նշանակում է, որ պաղեստինցիների ղեկավարը երկար հերթ կանգնելուց հետո կարող էր տոմս գնել եւ մտնել:

Թանգարանի ղեկավարության այս յուրօրինակ մերժումն անհարմար վիճակի է մատնել ամերիկյան պետքարտուղարությանը, որը սկզբում յայտնեցնի առաջարկով էր Արաֆաթին ընդունել թանգարան այցելելու գաղափարը, որպես հրեա ժողովրդի տառապանքների նկատմամբ հարգանքի եւ բարիկամեցողության նշան:

Ինչպես հայտնի է, Յասեր Արաֆաթն այս շաբաթ այցելեց Մ. Նահանգներ եւ տեսակցություն ունեցավ նախագահ Քլինթոնի հետ, որն ընդունեց նաեւ Իսրայելի վարչապետ Նաթանյահուին:

Երկու գորգ եւ «Իմ ընտրությունն» էլ Ալիեւի կողմից Շեւարդնաձեին

ԹԲԻԼԻՍԻ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ՍՊՏՆԻԿ-ԻՏՍՈ-ՏՍՍՀ: Հունվարի 24-ին այստեղ գտնվող Հեյդար Ալիեւը ադրբեջանական երկու գորգ է նվիրել էդուարդ Շեւարդնաձեին նրա 70-ամյակի առթիվ:

Գորգերը պատրաստվել էին հատկապես հոբելյանի առթիվ: Նրանցից մեկի վրա երկու երկրների պետական դրոշներն են ու զինանշանները, մյուսի վրա պատկերված են էդուարդ Շեւարդնաձեն եւ նրա տիկինը:

Վրաստանի նախագահին մատուցվեց նաեւ նրա «Իմ ընտրությունը» գրքի առաջին օրինակը, որն ադրբեջաներեն լույս է ընծայվել Բաքվում:

Էրբաքանը հույսը չի կորցնում

26 ՀՈՒՆՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Թուրքական «Բարություն» կուսակցության պատգամավորական խմբակցության անդամներից մեկն ասել է, որ իր կուսակցությունը մտադիր է խորհրդարանական քննարկման առարկա դարձնել Սահմանադրական դատարանի հայտնի որոշումը, համաձայն որի մահմեդական ոճով գրվածություն ունեցող այս կուսակցության գործունեությունն արգելվում է, իսկ կուսակցության առաջնորդ եւ նախկին վարչապետ Նեջմեթթին Էրբաքանը 5 տարով զրկվում է քաղաքական գործունեության վարելու իրավունքից:

Էրբաքանն ինքը հույս է հայտնել, որ խորհրդարանը կմերժի ՍԴ-ի որոշումը: Էրբաքանն ասել է, որ միայն վերջին մի քանի շաբաթվա ընթացքում ետս 60 հազար մարդ է անդամագրվել ընդդիմադիր փակված կուսակցությանը: Ըստ Էրբաքանի տվյալների, կուսակցության անդամների թիվը ներկայումս կազմում է շուրջ 4 մլն 300 հազար մարդ:

ՀԱՆՈՒՆ ԱՍՏԾՈ

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանությունը մտադիր է Իսլամական հեղափոխության հաղթանակի 19-րդ տարեդարձի առթիվ եւ Այգաբացի տասնօրյակի շեմին (փետրվարի 1-11-ը) կազմակերպել նկարչության մրցույթ «Իրանը հայ նասուկների եւ պատանիների աչքերով» խորագրով: Մրցույթին մասնակցելու համար 7-15 տարեկան մանուկներն ու պատանիները կարող են մինչեւ սույն թվականի փետրվարի 9-ը իրենց նկարչական աշխատանքները ներկայացնել Երեւանում ԻԻՀ դեսպանություն՝ Երեւան, Կոմիտաս, Բուդաղյան փողոց 1:

Առաջին երեք տեղերը զբաղեցրած անձինք կստանան թանկարժեք նվերներ, իսկ մնացած բոլոր մասնակիցներին կտրվի պատվոգիր:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Բուլղարիան ռուսականի փոխարեն ուզում է թուրքական գազ ստանալ

26 ՀՈՒՆՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Բուլղարիայի էներգետիկայի հարցերով կոմիտեի նախագահ Շիլիասը ժամանեց Անկարա՝ քննարկելու Բուլղարիայի եւ Թուրքիայի միջ էներգետիկայի բնագավառում գործակցության ընդլայնման խնդիրը: Բուլղարիան ցանկանում է հրաժարվել ռուսական բնական գազից: Բուլղարական կողմին անընդունելի են թվում ռուսաստանյան Գազպրոմի առաջադրած պայմանները: Բուլղարիայի էներգետիկայի հարցերով Անկարայում կոմիտեի ղեկավարը քննարկելու է Թուրքմենստան-Իրան-Թուրքիա գազամուղով գազ ստանալու հնարավորությունը: Բուլղարիան եվրոպական երկրներից առաջինն է, որ հայտ է ներկայացնում թուրքմենական գազի համար:

Համիլ Բասաեւ. Չեչնիան շահագրգռված է Իսրայելի հետ կապեր հաստատելով

ԹԵԼ ԱՎԻՎ, 26 ՀՈՒՆՎԱՐ, ՍՍԱՐՔ: Իսրայելի հետ գյուղատնտեսական հատվածում, ոչ մեծ ձեռնարկություններում գյուղմթերքների վերամշակման, ինչպես նաեւ զենքի մատակարարման՝ հատկապես հակաօդային պաշտպանության միջոցների, ոլորտում կապեր հաստատելու Չեչնիայի շահագրգռության մասին հայտարարեց Չեչնիայի փոխվարչապետ Շամիլ Բասաեւը հեռախոսով Գրոզնուց իսրայելական «Հարեց» թերթին տված հարցազրույցում: Մենք ուրախ կլինենք, եթե գործարարների կամ կառավարության կողմից Չեչնիայի հետ համագործակցելու կոնկրետ առաջարկներ ստանանք, ասաց Բասաեւը:

Դավիթ, Նվարդ եւ Մհեր Գյուլումյանները խոր կսկիծով հայտնում են սիրելի մայրիկի՝

ՄԻՐՈՒԾ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ

մահը:

Հուղարկավորությունը այսօր ժամը 14-ին. Երեւանի Փաշայան փողոցի թիվ 1 շենքի 11 բնակարանից:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-rդ հարկում:

Հեռ.՝ 44-97-40, 58-18-41

(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

4 սենյականոց բնակարան 115/70 քմ, Չարենցի 52, 3 հարկանի քառ. շենքի 2-rդ հարկում:

Հեռ.՝ 55-66-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

2 սենյականոց բնակարան Դեկաբրիստների փ. 5/3 հարկում:

Զանգահարել 24-25-88

ԱՐԱԳ ՆԻՀԱՐՈՒՄ

առանց դիետայի եւ ֆիզիկական վարժությունների, անվնաս եւ արդյունավետ

30 օրում 5-15 կգ:

Հեռ. 22-04-90

ժամը 9-22

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

առանձնատուն, 80 քառ. մ նկուղ ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

«ՍՊՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 746. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 26.01.1998. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@